

«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ N1
ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2024-2029 թվականների զարգացման ծրագիր



Հավակնորդ՝ Հասմիկ Ումրշատյան

1996 թվականից, աշխատելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի N 1 միջնակարգ դպրոցում ՄԿԱ գծով փոխստեղծ, 2024-2029 դպրոցի զարգացման ծրագիրը մշակել եմ՝ հաշվի առնելով դպրոցում առկա հիմնախնդիրները, ծնողների, սովորողների, ուսուցիչների առաջարկությունները, ինչպես նաև մեթոդական հիմք է հանդիսացել՝

1. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները» ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ. սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրամանը (փոփոխություն 2024թ. փետրվարի 8-ի N 09-ն հրամանի)։
2. ՀՀ Սահմանադրություն։
3. «Կրթության մասին» օրենք։
4. «Հանրակրթության մասին» օրենք։
5. Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիր։
6. Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիր։
7. «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն։
8. Ուսումնական հաստատության վերջին երեք տարվա գործունեության ներքին գնահատման հաշվետվություններ։
9. Օրենքով սահմանված կարգով նորմատիվ իրավական ակտեր։

1. Ուսումնական հաստատության գործունեությունը	3
2.1 Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքները	6
2.2 Նպատակներ, խնդիրներ, գործողություններ, ժամանակացույց, անհրաժեշտ միջոցներ, արդյունքների չափման մեխանիզմներ, ռիսկեր, ռիսկերի կանխման գործողություններ	22
3.1 Հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքները	45
3.2 Նպատակներ, խնդիրներ, գործողություններ, ժամանակացույց, անհրաժեշտ միջոցներ, արդյունքների չափման մեխանիզմներ, ռիսկեր, ռիսկերի կանխման գործողություններ	50
4.1 Համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ուժեղ և թույլ կողմերը	57
4.2 Նպատակներ, խնդիրներ, գործողություններ, ժամանակացույց, անհրաժեշտ միջոցներ, արդյունքների չափման մեխանիզմներ, ռիսկեր, ռիսկերի կանխման գործողություններ	61
5.1 Հաստատության խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերը	75
5.2 Նպատակներ, խնդիրներ, գործողություններ, ժամանակացույց, անհրաժեշտ միջոցներ, արդյունքների չափման մեխանիզմներ, ռիսկեր, ռիսկերի կանխման գործողություններ	80
6.1 Հաստատության շենքային պայմանների նպատակային գործածությունը և նյութատեխնիկական բազան	90
6.2 Նպատակներ, խնդիրներ, գործողություններ, ժամանակացույց, անհրաժեշտ միջոցներ, արդյունքների չափման մեխանիզմներ, ռիսկեր, ռիսկերի կանխման գործողություններ	97
7. Զարգացման ծրագրի արդյունքների գնահատման մեխանիզմը	108
8. Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացի նկարներ	110

1. Ուսումնական հաստատության գործունեությունը

ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաստատության անվանումը	«ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ գյուղի N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
Հիմնադրման տարեթիվը	Դպրոցական շենքը տիպային է, կառուցվել է 1970 թվականին, հզորությունը 900 աշակերտի համար է
Իրավաբանական անձի պետական գրանցման վկայական պետոեգիստրի կողմից տրված վկայական	2002 թվականի նոյեմբերի 27-ին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետոեգիստրի տարածքային բաժնում
Անշարժ գույքի գրանցումը	70.210.00880
Կանոնադրության հաստատման գրանցման թիվ	Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 2024 թվականի մարտի 11-ի Գեղարքունիքի մարզպետի թիվ 55-Ա որոշմամբ:
Հատկացված սահմանային թիվ/սովորողների փաստացի թիվ	Նախակրթարան 30/20 Տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան 160/144 Հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան 300/185 Միջնակարգ ընդհանուր՝ 3-րդ աստիճան 180/80
Պետական իրավունքներ	Կլոր կնիք, ինքնուրույն հաշվեկշիռ, գանձապետական հաշիվ
Հասցե	Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ գյուղ, Ս.Ավետիսյան 45/1
Դպրոցի էլեկտրոնային հասցե	karmirgyugh1@schools.am
Դպրոցական կայքի հասցե	www. Karmirgyugh1.schoolsite.am
Ֆեսբուքյան սոցիալական կայքի հասցե	https://www.facebook.com/karmir1inschool
Աշխատանքային շաբաթվա տևողությունը	Հնգօրյա
Սովորողների թիվ	409
ԿԱՊԿՈՒ սովորողների թիվ	8
Մանկավարժների թիվ	53

Հաստատության գործունեությունը

Հանրակրթական դպրոցի գործունեության նպատակը սովորողների կողմից հանրակրթության պետական չափորոշի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, ինչպես նաև ինքնակրթության և լրացուցիչ կրթության պահանջունքների բավարարման պայմանների ստեղծումն ապահովելն է:

Հանրակրթական դպրոցի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների գուգորդման սկզբունքների վրա:

Հանրակրթական դպրոցը պատասխանատու է հանրակրթության պետական չափորոշի, հանրակրթական պետական ծրագրի, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական ու սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին և ընդունակություններին համապատասխան կրթության բովանդակության ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

1. Դպրոցի գործունեության կրթական կարիքների բավարարման ուղղությունները

Հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի՝

- 1) մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը.
- 2) մարդկային արժանապատվության պահպանմանը.
- 3) իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը.
- 4) ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը.
- 5) մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը.
- 6) ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը.
- 7) որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

2. Դպրոցի գործունեությունը համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Կրթության զարգացման տեսլականը կառուցված է այն դիրքորոշմամբ, որ յուրաքանչյուրն օժտված է որոշակի տաղանդով, և կրթության համակարգի առաքելությունն է բացահայտել յուրաքանչյուր սովորողի տաղանդները և հնարավորինս զարգացնել դրանք՝ ուղղորդելով դեպի պետության ամրապնդումը և տնտեսության զարգացումը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որի վերջնական նպատակն է.

Ձևավորել ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված, Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ, որը յուրաքանչյուրին, կյանքի բոլոր փուլերում, հնարավորություն է տալիս ստանալ իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն, ապահովում է շրջանավարտների մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը և ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը:

Ծրագրի վերջնական նպատակի իրականացման համար մինչև 2030 թվականը

հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.

1) հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.

2) հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին.

3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.

4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը.

5) հանրակրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին ինտեգրումը.

6) ուսումնական հաստատությունների ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռումը.

7) անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը.

8) հանրակրթական և այլ կրթական ծրագրերի փոխհամաձայնեցվածությունը:

3. Դպրոցի գործունեությունը համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին

2.1 Հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացի քանակական և որակական արդյունքների վերլուծություն, չափորոշչային պահանջներին համապատասխանությունը

Կրթական նոր քաղաքականության բովանդակության հիմքում կարողունակա՛հեն մոտեցումն է, իսկ դա նշանակում, որ ուսուցիչը դասավանդման ընթացքում պետք է ուսումնական գործընթացը կազմակերպի այնպես, որ սովորողի ուսումնառության ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ձևավորված կարողությունները, հմտությունները, արժեքներն ու դիրքորոշումները հնարավորինս կիրառվեն առօրյա կյանքում: Նոր չափորոշիչ էական պահանջներն ու առանձնահատկություններն են՝ 8 կարողունակություններ, որոնք պետք է ապահովել յուրաքանչյուր աստիճանում, հասկացությունների վրա հիմնված ուսումնառություն, ինչն արտահայտվում է բոլոր առարկաների դասաժամերին «խաչվող հասկացություններ» կատեգորիայի ապահովմամբ, գնահատում, ինչը նոր չափորոշչում ներկայացված է հայտորոշիչ, ձևավորող, ամփոփիչ տեսակներով: Դպրոցի ուսումնական գործընթացն իրականացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 27. 07. 2023 թվականի թիվ 98-Ն հրամանով հաստատած 1-ին, 4-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների օրինակելի ուսումնական պլանով, առարկայական ծրագրերով, ինչպես նաև 2-րդ, 3-րդ, 5-8-րդ, 10-րդ դասարանների նոր չափորոշիչների ուղեցույցով (ՀՀ կառավարության 04.02.2021թ N 136-Ն որոշում): Ուսումնական տարին սկսվում է 2024թ. սեպտեմբերի 2-ին, ավարտվում է 2025 թ. մայիսի 23-ին: Այն բաժանվում է 2 կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատումը սովորողների համար իրականացվում հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատման միջոցով: 2-րդ, 3-րդ դասարանների սովորողների ամփոփիչ գնահատումն իրականացվում է բնութագրման միջոցով, իսկ 4-12-րդ դասարանների համար՝ միավորային գնահատմամբ: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների միջոցով՝ տարեկան գնահատականները (ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 11-Ն 24.02.2023թ հրամանի պահանջների համաձայն): Դպրոցում գործում է գնահատման 10-միավորային համակարգ: Ուսումնական տարվա տևողությունը 1-ին դասարանների համար 30 շաբաթ է, 2-րդ դասարանների համար՝ 32, 3-12-րդ դասարանների համար՝ 34 շաբաթ: Ուսումնական պարապմունքների ընթացքում տրվում են արձակուրդներ՝ ԿԳՄՍՆ-ի կողմից հաստատված ժամանակացույցով: Դասարանների թիվը (2021-2022 ուստարի 18 դաս., 2022-2023 ուստարի 19 դաս., 2024-2025 ուստարի 20 դաս.) համեմատած ընթացիկ և նախորդ 2 ուստարվա հետ աճել է, որը պայմանավորված արտերկրից, այլ բնակավայրերից սովորողների տեղափոխմամբ, 10-րդ դասարանում աշակերտների ցանկությամբ ուսումը շարունակել դպրոցում: Դիտարկելով դասարաններում սովորողների թիվի (ընթացիկ և նախորդ 2 ուստարիների) փոփոխությունների դինամիկան, առաջին դասարանում դիտվում է նվազում, կախված համայնքում այդ տարիքային խմբի երեխանների քանակից, բայց աշակերտների ընդհանուր թիվ աճել է 409, պայմանավորված այլ բնակավայրերից տեղափոխված երեխանների թվով:


Տվյալներ սովորողների առաջադիմության վերաբերյալ 2021-2022,2022-2023,2023-2024 ուստարիների համար՝ ըստ կրթական աստիճանների

Ցուցանիշ	2021-2022 ուստարի				2022-2023 ուստարի				2023-2024 ուստարի			
	1-ից 4-րդ դաս.	4-րդ 5-ից 9-րդ դաս.	10-ից 12-րդ դաս.		1-ից 4-րդ դաս.	4-րդ 5-ից 9-րդ դաս.	10-ից 12-րդ դաս.		1-ից 4-րդ դաս.	4-րդ 5-ից 9-րդ դաս.	10-ից 12-րդ դաս.	
Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝	24,6 4%	24,85 %	18,7%		26,7%	18,2%	20,2%		30,3%	15,68%	19,7%	
Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝	17,6%	47.3%	60%		18,1%	48,7%	60%		18,9%	52,97%	62,5%	
Ավարտման գործակից	100%	100%	100%		100%	100%	100%		100%	100%	100%	

Գերազանց առաջադիմությամբ 5-12-րդ դասարանի սովորողների ղինամիկայում դիտվում է անկում,ցածր առաջադիմություն ունեցող սովորողների ղինամիկայում դիտվում է աճ:Անկումը կարելի է դիտարկել գնահատման հավաստիության, հուսալիության, օրյեկտիվության,մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները պահպանելու հետ:1-4-րդ դասարանի սովորողների առաջադիմության մեծացումը պայմանավորված է ծնողների մասնակցությամբ ուսուցման գործընթացին: 5-12-րդ դասարաններում ցածր առաջադիմություն ունեցող սովորողների աճի պատճառներից է ուսուցիչների մանկավարժականհոգեբանական անբավարար հմտությունները աշակերտների՝ սովորելու մոտիվացիան բարձրացնելու և ծնողների հետ համապատասխան աշխատանք տանելու, ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունների արդյունավետությունը բարձրացնելով:

Առաջադիմություն և որակ

Բնութագրիչներ	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Առաջադիմություն	100 %	100 %	100 %
Որակ	52 %	51 %	45,34%



Դիտվում է որակի անկումը, որը կարելի է կապել ծնող-դպրոց-սովորող թույլ կապի, կրթական միջավայրի թույլ կողմերի հետ:

Տվյալներ 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների արդյունքների դինամիկայի վերաբերյալ՝ 2022-2023/2023-2024 ուստարիներ

Քննական առարկաներ	Քննությունների միջին միավորների փոփոխությունը՝ ըստ կրթական աստիճանների					
	Քննությունների միջին միավորների աճի տոկոսը			Քննությունների միջին միավորների նվազման տոկոսը		
	4-րդ. դաս.	9-րդ. դաս.	12-րդ. դաս.	4-րդ. դաս.	9-րդ. դաս.	12-րդ. դաս.
Հայոց լեզու	0 %	11,34 %	4 %	9,78 %	0 %	0 %
Մաթեմատիկա	0 %	2,64 %	0 %	12,2 %	0 %	3,2 %
Օտար լեզու		1,13 %			0 %	
բնագիտություն		20 %			0 %	
հայոց պատմություն		0	2,1 %		2,99 %	0 %
Գրականություն		3,6 %			0 %	
Ֆիզկուլտուրա		0,24 %			0 %	

4-րդ դասարանում դիտվել է միավորների նվազում. քննական թեստերը կազմվել են ճիշտ չափանիշներով: 9-րդ դասարանում՝ աճ, բացի հայոց պատմությունից. սովորողների պատմողական առարկաների նկատմամբ հետաքրքրության պակաս: 12-րդ դասարանում՝ աճ, բացի մաթեմատիկայից. մաթեմատիկա առարկայից միասնական քննությունների մասնակցել են մեծ թվով աշակերտներ:

Սովորողների ԲՈՒՀ և ՄՄՈՒՀ թիվը

2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Միասնական քննությունների մասնակցել են սովորողների 41% և բոլորը ընդունվել են ԲՈՒՀ-եր:	Միասնական քննությունների մասնակցել են սովորողների 50% և բոլորը ընդունվել են ԲՈՒՀ-եր:
Հիմնական դպրոցից միջին մասնագիտական ուսումնական հաստատություն տեղափոխված աշակերտների թիվ 10 %, միջնակարգ դպրոցից՝ 4%:	Հիմնական դպրոցից միջին մասնագիտական ուսումնական հաստատություն տեղափոխված աշակերտների թիվ 11,5%, միջնակարգ դպրոցից՝ 9,3%:
Ավագ դպրոց տեղափոխված աշակերտների թիվ 0%:	Ավագ դպրոց տեղափոխված աշակերտների թիվ 0 %:

ԲՈՒՀ և ՄՄՈՒՀ սովորողների թիվը աճել է մասնագիտության ճիշտ կողմնորոշման պայմանավորված:

Տվյալներ առարկայական օլիմպիադաներին և սպորտային, երաժշտական, գեղարվեստի, մշակութային մրցույթներին սովորողների մասնակցության վերաբերյալ

Աղյուսակ 11

Ցուցանիշ	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը	11	7	1
Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը	8	4	0
Մարզային և հանրապետական սպորտային, երաժշտական, գեղարվեստի, մշակութային մրցույթների մասնակիցների թիվը և տոկոսը	9/1,4%	15/3,6%	11/2,7%
Միջազգային սպորտային, երաժշտական, գեղարվեստի, մշակութային մրցույթներին մրցանակների ստացած սովորողների թիվը և տոկոսը	6/1,3%	8/2,7%	4/1,9%

Ուսումնական հաստատության սովորողները մասնակցել են «Այբ» կրթական հիմնադրամի կողմից կազմակերպած «Կենգուրու», «Մեղու» «Ոգնի» մրցույթներին: 2011, 2012, 2014 թվականներին դպրոցը ունեցել է հաղթողներ «Կենգուրու», «Մեղու» մրցույթներից: 2015-2020 թթ 2 մրցույթներից ունեցել է լավագույն մրցանակակիրներ: 2021-2023 թթ մասնակիցների քանակը պակասել է, որը պայմանավորված է համավարակի

և մրցույթի առցանց ձևաչափով անցկացնելուց: 2023-2024 ուստարում ունեցել է «Մեդու» մրցույթի 3 մասնակից, որից 1 աշակերտ արժանացել է լավագույն մրցանակի: 2024թ-ին, մասնակցելով «Ոգնի» մրցույթի հանրապետական փուլին, դպրոցի խումբը գրադեցրել է 6-րդ հորիզոնական: 2022թ «Կորիզ»-ի եզրափակիչ փուլի լավագույն տասնյակ է անցել 1 սովորող, 2023թ մասնակցել են 8 սովորող, լավագույն տասնյակ անցել՝ 2 սովորող: Խրախուսական մրցանակները դրդապատճառ է հանդիսանում սովորողներին ավելի ակտիվ մասնակցեն մրցույթներին:

Իրականացվել է ՆԴՎ, կազմվել ժամանակացույց, անցկացվել մնացորդային գիտելիքների ստուգում տրվել են գրավոր աշխատանքներ (մայրենի 5-6-րդ, մաթեմատիկա 5-11-րդ, հայոց լեզու և հանրահաշիվ՝ 7-10-րդ դասարաններ):

Առարկա	Աշակերտների թիվ	Անբավարար գնահատական	Գերազանց	Առաջադիմություն	Որակ
Մայրենի	68	-	33	100	74%
Մաթեմատիկա	68	10	27	97,6	39,7%
Հայոց լեզու	208	43	80	88,1	38,46%
Հանրահաշիվ	194	27	42	86,4	22%

Գերազանց գնահատական ստացած աղջիկների թիվը կազմում է 27,49%, իսկ գերազանց գնահատական ստացած տղաների թիվը՝ 17,5%: Առաջադիմության և որակի նվազումը պայմանավորված է սովորողների ուսման նկատմամբ հետաքրքրության նվազմամբ, հատկապես տղաների, քանի որ մեծացել է հետաքրքրության շրջանակը առցանց տրիոյթում: Առաջադիմության և որակի նվազումը պայմանավորված է նաև գնահատման մեթոդաբանությունը ճիշտ կատարելու՝ արդար և օբեկտիվ գնահատում իրականացնելու հետ: Տրվել են գրավոր աշխատանքներ տնօրենության կողմից, իրականացվել առարկայական ստուգարքներ: Արդյունքներ համեմատությունը ցույց է տալիս, որ որոշ առարկաներից արդյունքների աճ է գրանցվել, կարելի է ենթադրել, որ սովորողները առավել մեծ ուշադրություն են սկսել դարձնել ուսմանը և կարևորություն տալ գիտելիքին, հմտություններին, դիրքորոշմանը և արժեքային համակարգի ձևավորմանը: Արդեն իսկ գիտակցելով, որ շատ կարևոր է իմանալ իմացածի և չիմացածի սահմանները, ձեռք բերել որոշակի հմտություններ և կարողունակություններ քննություններին մասնակցելու, ինչը անհրաժեշտ է յուրաքանչյուր սովորողին: Ստուգարքների թեստերը կազմվել են մեթոդական միավորումների կողմից, հաշվի առնելով ՀՊԶ-ը, առարկայական ծրագրերը և ակնկալվող վերջնարդյունքները: Ըստ ուսուցիչների վերլուծության որակի վրա աշխատելու շատ տեղ կա, կան առարկաներ, որ որակական առումով աճ է գրանցվել, կան՝ նվազել են:

Դիտվել է դպրոցական և տարածքային օլիմպիադաներին մասնակցության թվի աճ: Նվազել է մարզային օլիմպիադաների, մրցույթների մասնակիցների հաղթանակների թիվը, քանի որ օլիմպիադաների ծրագրերը բարդացել են, և չկան համապատասխան ռեսուրսներ պատրաստվելու համար (տարածաշրջանում, առցանց տրիոյթում չկան օլիմպիադաների խմբակներ): Առաջնորդվել են տարեկան աշխատանքային պլաններով, կազմել առարկայական թեմատիկ պլաններ, իրագեկվել են էլեկտրոնային մատյանների լրացման գործընթացը և օգնել լրացնելու ճիշտ ձևաչափով: 2023-2024 ուստարվա ընթացքում իրականացվել են դասալուսման ուսումնական բոլոր առարկաներից՝ նպատակ ունենալով ուսումնասիրել դասավանդման արդյունավետությունը, ՀՊԶ-ով և առարկայական չափորոշիչներով և ծրագրերով սահմանված

վերջնարդյունքները, գնահատման միավորային և ձևավորող գնահատականների արդյունավետությունը, նոր ուսուցիչների կողմից ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը, ՏՀՏ գործիքների կիրառումը և այլն: Դասալսումները գնահատվել են ըստ դասալսման սանդղակի և գնահատման արդյունքներից ելնելով կազմակերպել հետադարձ կապ: Դասալսումներ են կազմակերպել վերապատրաստված ուսուցիչների մոտ՝ ըստ դասալսման գնահատման սանդղակի, և վերլուծվել արդյունքները: Դիտարկվել են սովորողների ուսումնական հետաքրքրությունները և դրդապատճառները, ներառմանը նպաստող մանկավարժական ուղղություն՝ ուսումնառության համընդհանուր ձևավորումը: Դպրոցում երկրորդ տարին է իրականացվում է երկարօրյա ուսուցում նոր ՀՊՉ-ի ներդրված դասարաններում: Այն կազմակերպվում է ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների ուսումնառության արդյունքը բարելավելու համար (2-րդ, 3-րդ, 5-րդ դասարաններում՝ մայրենի, մաթեմատիկա, 6-րդ, 7-րդ, 8-րդ դասարաններում՝ հայոց լեզու, հանրահաշիվ): Վերլուծվել են խմբակների, ուսումնական նախագծերի, երկարօրյա դասերի ծրագրերի կատարողականը և արդյունքները, ներկայացվել առաջարկություններ ծրագրի բարելավման ուղղությամբ: Կարիքներ են գնահատվել նախագծի թեմայի ընտրելու, խնդիրները հստակ, չափելի, իրատեսական սահմանելու, համագործակցելու փուլերում: Կարիքներ են գնահատվել կապված գնահատման մեթոդաբանության, վերջնարդյունքների չափելի լինելու, Բյումի տաքսոնոմիայի կիրառման, ՏՀՏ-ի կիրառման, ՀՊՉ-ով նախատեսված կարողունակ դաս կազմակերպելու հետ: Կարևոր է ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունը, որից էլ բխում են ուսման նկատմամբ երեխայի վերաբերմունքն ու դրդապատճառները, նրա սոցիալականացումն ու իրեն դպրոցում լիիրավ անդամ համարելու զգացումը: Դիտարկվել է սովորողին շրջապատող սոցիալ-մշակութային միջավայրը, որպես դաստիարակչական և զարգացնող դեր, սովորողի ինքնազարգացմանը նպաստող կրթական միջավայրի ստեղծմանը սովորողի մասնակցության անհրաժեշտություն: Ստեղծելով կայուն կանոնակարգեր, նվազեցնելով սթրեսը, խրախուսելով ինքնարտահայտումը և խթանելով համագործակցային վարքագիծ և հավատը սեփական կարողությունների նկատմամբ՝ ուսումնական միջավայրերը նպաստել է արդյունավետ ուսուցմանը և բարեկցությանը՝ դպրոցում:

Վերլուծելով հաստատության տրամադրած կրթության որակը, ներկայացնում են ուժեղ և թույլ կողմերը	
Ուժեղ կողմ	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> - Բարձր որակավորում ունեցող և պատաստվածություն ունեցող մանկավարժական և վարչական համակազմ - Ուսումնառության գնահատման արդյունքներ (սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ գնահատում, ՀՊԶ-ին համապատասխան ստուգում(պետական ամփոփիչ ատեստավորում, մնացորդային գիտելիքների գնահատման արդյունքներ)) - Աշակերտների կրթական և մշակութային հաջողությունները - Ուսուցիչների գիտամանկավարժական գործունեությունը - Ուսուցիչների մասնակցությունը համաժողովներին, դասընթացներին, ծրագրերին - ԲՈՒՀ ընդունված շրջանավարտների մեծ թիվ - Սովորողները հիմնական դպրոցից հետո ուսումը շարունակում են ստանալ դպրոցում: - Բացակայությունների նկատմամբ վերահսկողությունը - ՀՊԶ-ով սահմանված 8 կարողունակությունների ձևավորումը սովորողների մոտ ինտեգրված ուսումնառություն կազմակերպելով -- Նոր ՀՊԶ-ով նախատեսված երկօրյա ուսուցման կազմակերպում, մշտադիտարկում, արդյունքների վերլուծություն - Բազմաբովանդակ խմբակները - Իրականացվել են ուսումնական նախագծեր, ստեղծվել վերջնարդյունքներ: - Տարրական դասարաններում ընթերցանության գնահատման արդյունքների քննարկում: 	<ul style="list-style-type: none"> - Կրթության կազմակերպման միջավայրը (շենքային պայմաններ, կրթական պաշարներ, ուսումնական գրականություն, ուսումնամեթոդական, նյութատեխնիկական հագեցվածություն) - Ուսուցման փոխներգործուն մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման պակաս - փոխադարձ դասալսումների և առաջավոր փորձի քիչ փոխանակում - ՆԴՎ ,մշտադիտարկման արդյունքում վեր հանած ինդիկսների լուծման նկատմամբ թույլ հետևողականություն - Նախագծային, հետազոտական աշխատանքների, բանավեճի, ուսումնական ֆիլմերի քննարկման, դպրոցական գիտաժողովների պակաս - Սովորողների համար առկա և առցանց լրացուցիչ կրթական ռեսուրսների պակաս - Ուսման և կրթական ծրագրերի մասնակցության տղաների պասիվություն - Օլիմպիադաներին մասնակցելու համապատասխան գիտելիքների պակաս սովորողների մոտ - Սովորողների բարձր խտությունը դասարաններում - ՏՀՏ-ը գործիքներին ոչ լիարժեք գործածությունը դասապրոցեսում - Սովորելու նկատմամբ հետաքրքրության պակաս - Կարողունակությունների 4 բաղադրիչներով նախատեսված ուսումնառության կազմակերպման պակաս - Ինտեգրված դասերի, նախագծերի պակաս - Գնահատման մեթոդաբանության ոչ ճիշտ իրականացում՝ օգտագործելով բնութագրիչներ - Նոր ՀՊԶ-ի ներդրման հետ առաջացած դժվարությունները

Հաստատության սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>-Հաստատությունը ունի «Աղետների ռիսկերի նվազեցման» պլան և ուսումնական տարվա ընթացքում գործարկվում է պլանը, իրականացվում վարժանքներ:</p> <p>-Ուսումնական հաստատությունը իրականացնում է սովորողների ֆիզիկական, հոգևոր, սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական միջոցառումներ և ծրագրեր:</p> <p>-Հաստատությունում կատարվում է աշխատանք՝ բացահայտելու և կանխարգելելու ծխախոտի օգտագործման, բուլիզի դեպքերը:</p> <p>-Պարբերաբար իրականացվում են ծնողների իրազեկման աշխատանքներ ընտանիքում՝ երեխայի խնամքի ու դաստիարակության, ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխային զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ:</p> <p>-Անցկացվում են միջոցառումներ, դասաղեկի ժամեր, հանդիպում հոգեբանի հետ բուլիզի թեմայով:</p> <p>-Առկա է բուժկետ. տրամադրվում է առաջին օգնություն:</p>	<p>-Հաստատության աշխատակազմը և սովորողները տիրապետում են աղետների ժամանակ և արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին, բայց չունեն գործնական հմտություններ:</p> <p>-Հաստատությունում անվտանգության միջոցները ունեն համալրման կարիք:</p> <p>-Տեղական վտանգների գնահատման և աղետների պատրաստվածության ու հակազդման մեխանիզմների ուղղությամբ հաստատությունում քիչ են իրականացվող միջոցառումներ և գործնական վարժանքներ:</p> <p>-Ծնողները ոչ միշտ են կրում պատասխանատվություն ընտանիքում երեխայի խնամքի ու դաստիարակության, ծնողական պարտականությունների նկատմամբ, ընտանեկան միջավայրը ապահով և հոգատար չէ:</p> <p>-Ոչ միշտ են բացահայտվում բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերը:</p> <p>-Երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերում փոքր է համագործակցությունը պատկան մարմինների հետ:</p> <p>- Բուլիզի, օտարման, հալածանքի դեպքերի քիչ բացահայտում:</p>

Դաստիարակչական աշխատանքներ

Դպրոցը մեծ ուշադրություն է դարձնում արտադասարանական և արտադպրոցական գործունեության կազմակերպմանը: Այն իրականացվում է սովորողների ցանկությունների, կրթական կարիքների, տարիքային առանձնահատկությունների համապատասխան: Դպրոցում պլանավորված նշում են բոլոր հիշարժան օրերը, մեր մեծերի հոբելյանական տարելիցները: Անցկացնում միջոցառումներ և ծրագրեր՝ ուղղված աշակերտների պետականության դերի գիտակցմանը, ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացմանը, հայրենասիրական, մարդասիրական, քաղաքացիական, գեղագիտական և բնապահպանական ուսուցմանը և դաստիարակությանը: Դաստիարակչական աշխատանքները իրենց գործառնությունների շրջանակներում իրականացնում են սովորողների դաստիարակչական միջոցառումներ, դաստիարակչական ժամեր, էքսկուրսիաներ: Դպրոցում գործող խմբակները՝ «Գրական թատերական», «Զարթոնիր», «Զարմանահրաշ կենդանի մոլորակ», «Հայկական մշակութային արժեքներ», «Հայրենյան», «Հեքիաթների աշխարհում», «Մեղիա և թվային գրագիտություն», «Մեզ շրջապատող դեղաբույսեր», «Շախմատի աշխարհում», «Պատանի աշխարհագետ», «Պատմամշակութային Հայաստան», «Օգտակար լինենք Սևանա լճին», որոնք նպաստում են սովորողների 8 կարողունակությունների զարգացմանը:

Ռազմահայեցողական դաստիարակությունը համարելով առաջնային՝ այցելություններ են կազմակերպվում ռազմական ուսումնական հաստատություններ, հանդիպումներ զինվորականների հետ, ավանդույթ դարձած հանդիպում բանակից զորացրված շրջանավարտների հետ: Դպրոցում կան վահանակներ՝ նվիրված բոլոր ազատամարտերի հերոսներին: Մասնակցում են ռազմամարզական խաղերին: Դպրոցում անցկացվել է «Կապույտ անմահության մեջ լողացող հոգիները» խորագիրը կրող գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված Արցախյան 44-օրյա գոյամարտում իրենց կյանքը տված և անմահացած մեր հերոս տղաներ Գարիկ Գափոյանի, Մամվել Խաչատրյանի և Նարեկ Ղոռյանի անուններով վերանորոգված և անվանակոչված դասասենյակների բացմանը: Անցկացվել է հիշատակի և ոգեշնչման միջոցառում՝ նվիրված Արցախյան երրորդ պատերազմի մասնակից Վահագն Մեյրանյանին, ում ընտանիքը պատերազմի օրերին իր ապաստանը գտավ գյուղում, իսկ ընտանիքի զավակները՝ Լիլիթ և Արսեն Մեյրանյանները, իրենց կրթությունը շարունակելու հնարավորություն ստացան կրթօջախում: Պարբերաբար սովորողները և ուսուցիչները այցելում են զինվորների շիրմաքարերին, կատարում ծաղկադրման արարողություն, մայրության օրը ծաղիկներ նվիրում զոհված զինվորների մայրերին, կազմակերպում Բանակի օրվան, Անկախության օրվան նվիրած միջոցառումներ՝ մասնակից դարձնելով նահատակների ծնողներին, այցելում հուշահամալիրներ և թանգարաններ, կազմակերպում զրույցներ, բաց դասեր՝ նվիրված հայ հերոսներին: Պատմաբանի օրվա առթիվ «ԿԶՆԱԿ» հիմնադրամը «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամի հետ համատեղ իրականացրեց «Պատմաբանի օր. Նախագծային ուսումնառություն» ծրագիրը, որին ակտիվ մասնակցել է դպրոցը և ներկայացրել նախագծեր հայոց պատմության էջերից:

Քաղաքացիական դաստիարակության

Կան վահանակներ՝ նվիրված հայրենիքին, հայրենասեր հայերին, դպրոցի բարերարներին:

Պարբերաբար կազմակերպում են արշավներ դեպի հայրենի բնաշխարհ:

Նշվում Գիտելիքի օրը, Ուսուցչի օրը, Թարգմանչանց տոնը, Գիրք նվիրելու օրը, Պոեզիայի միջազգային օրը: Անցկացվում են դաստիարակչական ժամեր՝ նվիրված երկրին, հայրենի եզերքին, մայրենի լեզվին, պետական խորհրդանիշներին: Դպրոցի թիմը

Կենտրոնական բանկի կողմից իրականացվող «Քաղաքացի նախագիծ»-ի հաղթող է ճանաչվել: Նախաձեռնում են պատմամշակութային վայրերի մաքրման աշխատանքներ, ուսումնասիրում հայենի եզերքի նյութական և ոչ նյութական ժառանգությունները, իրականացնում նախագծեր՝ ստեղծելով տեսանյութեր, պաստառներ: Մասնակցելով «Բարբառային երկխոսություն» մրցույթին՝ դպրոցի ստեղծագործող ուսուցիչ Գ.Զանոյանի շնորհիվ գրավել են առաջին հորիզոնական: Մասնակցելով Իթվինինգի «Զարգացած անհատ, զարգացած համայնք» նախագծին՝ 12 սովորողները և ուսուցիչ Հ.Ումրշատյանը արժանացել են Որակի հավաստագրի: Դպրոցի բանավեճի ակումբի անդամ Մերի Դավիթյանը, ընդգրկվելով Գավառի տարածաշրջանի հավաքական խմբում, մասնակցել է «Երիտասարդությունը ներգրավված հասարակության մեջ» ծրագրի շրջանակում բանավեճի հանրապետական մրցաշարին: Հավաքական խումբը գրավել է երրորդ հորիզոնականը: «Մշակութային բազմազանություն» ծրագրի շրջանակներում իրականացնում են միջոցառումներ, որոնք ընդգրկում են ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության տարրերը՝ նպաստելով դրանց պահպանմանն ու զարգացմանը:

Բնապահպանական դաստիարակություն

Պարբերաբար մասնակցում են համայնքի և մերձդպրոցական տարածքի մաքրման աշխատանքներին: ՄԱԶԾ-ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրով ֆինանսավորվող «Կանաչ հմտություններ երիտասարդների համար» ծրագրի շրջանակում դպրոցի «Կանաչ ջոկատ»-ը, որին ներգրավված են 10 աշակերտ և ֆիզիկայի ուսուցիչ Ս.Մարտոյանը, մասնակցել են կարողությունների զարգացման դասընթացներին, և մասնակցելով «Կանաչ տեխնոլոգիաներ դպրոցներում» մրցույթին ներկայացված ծրագրին՝ համարժեք էներգախնայողության ապահովման և էներգաարդյունավետության բարձրացման գործողությունների նպատակով, դպրոցը արժանացել է 2000000 դրամական պարգևին, որով վերանորոգվել են դպրոցի պատուհանները: Ուսուցիչները, մասնակցելով «Կլիմայական արկղիկ» ծրագրին, որի նպատակն է նպաստել ՄԱԶԾ գործունեության ավելի լայն շրջանակի՝ Հայաստանում կլիմայական խելացի լուծումների և կլիմայական դիմակայունության ձևավորման համար, ձեռք բերելով գիտելիքներ և հմտություններ՝ իրականացրել են նախագծեր և միջոցառումներ: «Կրթություն և իրազեկում կլիմայի գործողության համար Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում» տարածաշրջանային կոնֆերանսին առցանց ձևաչափով մասնակցել է դպրոցի սովորող Մերի Դավիթյանը՝ ներկանացնելով սահիկաշար՝ «Կլիմայի վերաբերյալ կրթություն» թեմայով: Զարգացնելով էկոտուրիզմը՝ պատրաստել են տեսանյութեր՝ հայրենի եզերքին նվիրված: Համագործակցելով կազմակերպություններին՝ անցկացրել են ծառատունկ: Նշվել է «Երկիր մոլորակի» օրը: Մասնակցել են ԿԶՆԱԿ-ի «Հետազոտենք և բացահայտենք աշխարհը» նախագծին: Լինելով «Սևանի ընկերներ» ծրագրի ակտիվ մասնակիցներ՝ ճանաչվել են բանապահպանական նախագծերի հաղթող: «Հարմարվողականության ազգային ծրագիր Հայաստանում» (ՀԱԾ) ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի շրջանակում, մասնակցելով «Դիմակայենք կլիմայի փոփոխությանը» խորագրով դպրոցականների համար նախատեսված մրցույթին, դպրոցի թիմը ճանաչվել է հաղթող: Դպրոցի աշակերտները

մասնակցել են «Խնայողությունների խաղ» դասընթացին, որը իրականացվում էր «Ֆինանսական և էկոլոգիական գրագիտություն՝ Հայաստանում համայնքների էներգետիկ արդյունավետությունը խթանելու համար» ծրագրի շրջանակներում՝ իրականացված միջազգային համագործակցության խնայողական բանկերի հիմնադրամի (DSIK) և Միջազգային համագործակցության գերմանական միության (GIZ) կողմից և Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) անունից: Ճանաչվել են «Ժիվայա կլասիկա» խորագրով մանկական ընթերցանության միջազգային մրցույթ-փառատոնի հանրապետական փուլի հաղթողներ: Այցել են «Էյ-Թի-Փի» բնապահպանական կենտրոն, մասնակցել դասընթացների և ճանաչվել կազմակերպված մրցույթների հաղթող: Green Skills Award-ը ամենամյա մրցույթ է, որը ճանաչում է նախագծեր ամբողջ աշխարհից, որոնք ցույց են տալիս կանաչ հմտությունների և կրթության ոլորտում նորարարությունն ու ստեղծագործությունը: Հաղթողները, որոնք որոշվել են հանրային քվեարկությամբ, Խորվաթիայի «Կանաչ փոփոխողներն» նախագիծ էր: Հայաստանը ներկայացնում էին Կարմիր գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի աշակերտները՝ Հասմիկ Ումրշատյանի գլխավորությամբ: Ակտիվ մասնակցել են «Կենսաբազմազանության միջազգային օրվան» նվիրված հանրապետական միջոցառումներին:

Գեղագիտական դաստիարակություն

Անցկացվում են ցերեկույթներ՝ նվիրված գրողներին, նկարիչներին, երաժիշտներին, այցելություններ թանգարաններ, ցուցասրահներ՝ իրականացնելով համատեղ կրթական ծրագրեր: Մասնակցում «Նռան հատիկ» մրցույթին: Մասնակցում փառատոնների, առարկայական մրցույթների՝ ասմունքի, երգի, պարի, նկարչության: Օգտագործելով դպրոցական բաժանորդային համակարգի հնարավորությունները՝ այցելում ոչ միային մեր տարածաշրջանի թատրոն, թանգարաններ, այլ նաև ամբողջ Հայաստանի տարածքում գործող մշակութային օջախներ: Մասնակցում են «Քո արվեստը դպրոցում» նախագծին: «Ոսկե ձայն» միջազգային մրցույթ-փառատոնին Golden voices 2021-ին Մ. Սահակյան և Կ. Սահակյան զբաղեցրել են 1-ին տեղը: Մասնակցել են «Մասնա ծոեր» էպոսին նվիրված աշակերտական աշխատաժողովին: ԿԶՆԱԿ-ի «Հայ երգը դպրոցում» նախագծին մասնակցելով՝ բացահայտեցին մեր գյուղի աշուղին, որի ստեղծագործությունները մոռացության էին տրվել: Իրականացնում են մրջոցառումներ «Ֆրանկոֆոնիայի միջազգային օր» առթիվ: Բեմադրում պիեսներ և հեքիաթներ: Անցկացնում վիկտորինաներ: Անցկացնում գրքի քննարկումներ, հանդիպումներ գրողների հետ:

Հոգևոր և բարոյական դաստիարակություն

Այցելում են եկեղեցի և մասնակցություն պատարագների, ժամերգությունների: Այցելում են հոգևոր ուսումնական հաստատություններ՝ հանդիպելով հոգևորականների հետ: Նշում եկեղեցիական տոները: Ուխտագնացություններ կազմակերպում հոգևոր և մշակութային վայրեր: Կազմակերպում էքսկուրսիաներ և հայրենագիտական ճամփորդություններ Հայաստանի պատմամշակութային վայրեր՝ սովորողների մոտ հայրենի բնության, պատմամշակութային ժառանգության արժևորման նպատակով:

Ֆիզիկական դաստիարակություն

Մասնակցում են սպորտլանդիաների, իրականացնում ամենամյա «Գեղարքունյաց ձմեռ» ծրագիրը: Մասնակցում սպորտային միջոցների տարածքային և մարզային փուլերին՝ Ազգային գավաթի մրցաշարերին, շախմատի մրցույթներին, թենիսի մրցաշարերին: Դպրոցի սովորողները բռնցքամարտի մրցույթների հաղթող են հանդիսանում: Սրտի համաշխարհային օրն «Իմ սրտի օր» կարգախոսի ներքո անցկացվել է տարբեր սպորտային միջոցառումներ, առողջ ապրելակերպին նվիրված խաղեր, ֆլեշմոբեր:

Աշակերտները մասնակցում են ոչ ֆորմալ կրթական հարթակների կրթական նախագծերին և հանդիսանում կամավորներ:

Վերլուծելով դաստիարակչական աշխատանքները դպրոցում՝ ձևավորվում են նոր ՀՊԶ-ի հիմքում ընկած է 8 կարողունակությունները 4 բաղադրիչով՝ գիտելիք, հմտություն, դիրքորոշում և արժեքային համակարգ: Թույլ կողմեր են ռազմական հաստատություններ սովորելու ձգտումը, մարզական մրցույթների հաղթողների քիչ թիվը, տղաների մասնակցությունը նախագծերին: Քիչ են անցկացվում ինտելեկտուալ մրցումներ, ընթերցանության մրցույթներ, ինչպես նաև ուսումնական խաղեր, որոնք ուղղված են սովորողների կրթական պահանջմունքների և հմտությունների զարգացմանն ու ամրապնդմանը:

Ուսումնական միջավայր	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>-Ուսումնական հաստատությունը ունի գրադարան,որից օգտվում են սովորողները,ուսուցիչները,վարչական կազմը:</p> <p>-Գրադարանում անցկացվում են դասեր,բեմադրվում պիեսներ,նշվում Գիրք նվիրելու օրը,Մայրենի լեզվի օրը,Պեղծարարի օրը,մեր մեծերի հոբելյանները:</p> <p>-Գրադարանավարը ունի համակարգիչ և տիրապետում է համակարգչային հաստուկ ծրագրին:Թարմացնում է վահանակները և ձևավորում բովանդակային:</p> <p>-Դպրոցում գործող ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաները հիմնադրամների կողմից համալրված են նոր սարքերով և ուսումնական նյութերով,որոնք հնարավորություն են տալիս իրականացնել գործնական, հետազոտական աշխատանքներ,իրականացնել նախագծեր,մասնակցել գիտաժողովների:Դպրոցում գործում է «Պատանի հետազոտողներ » ակումբը,որը հանրայնացնում է հետաքրքիր փորձեր:</p> <p>-Ռազմագիտության կարիները ունի հին,բայց համապատասխան գույք և ուսումնական նյութեր և իրականացնում է գործնական պարապունքներ: Մասնակցում են ռազմամարզական խաղերի և գրավում մրցանակայի տեղեր:</p> <p>-Սովորողները մասնակցում են բազմաթիվ մեդիագրագիտության մրցույթների,որտեղ ներկայացնում են իրեց համակարգչային բարձր գիտելիքները:</p> <p>-Տեխնոլոգիայի ուսուցչուհին պարբերաբար կազմակերպում է ցուցահանդեսներ՝ ներկայացնելով աշակերտների աշխատանքները, մասնակցում բնապահպանական մրցույթների՝ ներկայացնելով թափոնարվեստ,իրականացնում նախագծեր:</p> <p>-2021-2023թթ սովորողները ճանաչվել են «Յոթ սարի ետևում» հայրենաճանաչողակա-գիտակրթական մրցույթ-փառատոնի հաղթողներ:</p> <p>-Հանդիսությունների մեծ և փոքր դահլիճներում իրականացվում են միջոցառումներ, հանդիպումներ,ժողովներ:</p>	<p>-Գրադարանը չունի հասանելի ինտերնետ և էլեկտրոնայի ռեսուրս,ունի գրաֆոնդը համալրելու կարիք,չունի ընթերցասարահ և նոր գրապահարաններ: Քիչ թվով հանդիպումներ են կազմակերպվում ժամանակակից գրողների հետ:Գրադարանից օգտվում են աշակերտների 50 %: Համագործակցությունը թույլ է համայնքի,քաղաքային,մարզային գրադարանների հետ, համատեղ միջոցառումների փոքր թիվ:</p> <p>-Պատմության քարտեզները ունեն թարմացման կարիք:</p> <p>-Հրաձգարանի բացակայություն: -</p> <p>-Տեխնոլոգիայի կարիները ունի նոր ուսումնական ռեսուրսների կարիք:</p> <p>-Մեծ դահլիճը ջեռուցման բացակայության պատճառով ոչ միշտ է օգտագործվում:</p> <p>-Համայնքային միջոցառումներ քիչ են իրականացվում հանդիսությունների դահլիճում և մարզադահլիճում:</p> <p>-Բոլոր առարկաները կարիք ունեն ուսումնադիդակտիկ նյութերի համալրման:</p> <p>-Ռեսուրս սենյակը կարիք ունի գույքի և ուսումնադիդակտիկ նյութերի:</p> <p>- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման մատչելի միջավայր և խելամիտ հարմարեցումներ:</p> <p>-Որոշումներ ընդունելիս ոչ միշտ է հաշվի առնվում սովորողների և ծնողների կարծիքն ու ձայնը և արդյո՞ք կարողանում է ապահովել նրանց մասնակցությունը դպրոցական կյանքի կազմակերպմանը, հարմարմանն ու պլանավորմանը:</p> <p>-Դպրոց ոչ լիարժեք պայմաններ ուսուցչի ֆիզիկական և հոգեբանական հարմարավետությունն ու մասնագիտական ազատությունն ապահովելու, առաջատար մանկավարժական փորձը ներդնելու, դպրոցի ներսում ուսուցչի պրոֆեսիոնալիզմը բարձրացնելու համար: Աշակերտակենտրոն մանկավարժական գործընթացի կազմակերպման քիչ թիվ՝ աշակերտներին սովորել սովորեցնելու գաղափարի իրականացումը՝ ինքնուրույն ուսուցումը</p>

<p>-Մարգարահիլիճում իրականացվում են դասապրոցեսներ, սպորտլանդիաներ, մրցաշարեր:</p> <p>-Համագործակցելով տարբեր ՀԿ-ների և հիմնադրամների հետ՝ ձեռք են բերվել որոշակի ռեսուրսներ՝ ինտերակտիվ գրատախտակ («Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամի) և միացել «Աշխարհացույց» ծրագրին:</p>	<p>զարգացնելու միջոցով:</p> <p>- Անվտանգ և բարենպաստ ուսումնական միջավայր ստեղծելու գործընթացում ուսուցիչներին ոչ բավարար գիտելիքները հոգեկան առողջության և հոգեառաջնության աջակցության վերաբերյալ:</p> <p>-Դասղեկները հոգեբանի հետ քիչ են կազմակերպում հանդիպումներ՝ համատեղ օգնելու սովորողներին ձեռք բերել սթրեսը կառավարելու, արդյունավետ հաղորդակցելու, իրենց կարիքների և բարեկեցության մասին հոգ տանելու և ճկունություն զարգացնելու հմտություններ:</p>
--	--

Հաստատությունում ներառական կրթության իրականացումը

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2.1-ին մաս. Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Ներառական կրթությունն համարվում է յուրաքանչյուր երեխայի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների ամբողջություն: Ուսումնական հաստատությունում իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացը կառուցվում է հիմք ընդունելով բոլոր սովորողների առանձնահատկություններն ու կարիքները, որոնց վրա հիմնվելով է՝ ստրամադրվում է մանկավարժահոգեբանական աջակցություն՝ նպատակ ունենալով խթանել յուրաքանչյուր երեխայի առավելագույն մասնակցությունը ուսումնական գործընթացին:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
-Ներառական կրթության զարգացումը որպես նպատակ ամրագրված է հաստատության զարգացման ծրագրում:	-Հաստատությունում բավարար չէ սարքավորումներ և ուսումնամեթոդական նյութեր ֆունկցիաների

-Հաստատության ղեկավար կազմը,ուսուցիչները,ուսուցչի օգնականները,հոգեբանը անցել են համապատասխան վերապատրաստման ՀՄԿ-ի,SՄԱԿ-ի,«Հույսի կամուրջ» ՀԿ-ի կողմից:

-Համագործակցելով ՏՄԱԿ-ի հետ՝ մասնակցում են դասընթացների և խորհրդատվությունների,տրամադրում ուսումնամեթոդական գրականություն:

-Դպրոցում գործում է բազմամասնագիտական խումբ,որը իրականացնում 8 ԿԱՊԿՈՒ սովորողների աջակցությունը: 5 ուսուցչի օգնականները և հոգեբանը շարունակաբար զբաղվում են ինքնակրթությամբ և մասնակցում առկա և հեռավար դասընթացների:

-Դասասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները մեկուսացված չեն:

-Հաստատությունն ունի ռեսուրս-սենյակ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար:

- ԱՌԻՊ մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը:

-Սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատությունը իրականացնում է սոցիալական աջակցության ծրագրեր՝ դասագրքերի վարձավճարների գումարի փոխհատուցում:

-Համագործակցելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի հետ՝ կազմակերպվել են աջակցություն հաշմանդամություն ունեցող սովորողի դեղորայքի գումարի տրամադրմամբ:

-Իրականացվել են անհատական խորհրդատվություններ,հոգեբանական աջակցություն սովորողների ծնողներին:

տարատեսակ սահմանափակումներ ունեցող սովորողների համար:

-Հաստատությունում ամենուրեք (դասասենյակներ, դահլիճներ, գրադարաններ և այլն) ապահովված չէ տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձնաց համար ֆիզիկական մատչելիություն:

-Ուսումնական հաստատությունում չկաներառականությանը նպաստող թեքահարթակ, հենակ,բազմոց,գորգ և այլն:

-Ռեսուրս սենյակ կարիք ունի վերանորոգման, գույքի և ուսումնադիդակտիկ նյութերի,աջակցող միջոցների:

- Ուսուցիչները ոչ միշտ են հարմարացնում դասի պլանը ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքներին, համագործակցում ուսուցչի օգնականի հետ,ստեղծում բազմակարծիք և մասնակցային միջավայր:

-ԱԽ-ը քիչ է ընդգրկում ԿԱՊԿՈՒ սովորողներին իրենց նախաձեռնություններին:Քիչ է ԿԱՊԿՈՒ աշակերտների հաջողությունների հրապարակումը , խրախուսումը:

-Ուսուցիչները ունեն համապատասխան գիտելիքներ,բայց ոչ միշտ են կիրառում արդյունավետ

<p>- Ուսուցիչները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր:</p> <p>-ԿԱՊԿՈԻ սովորողները մասնակցում են դպրոցում իրականացվող համադպրոցական և դասարանական միջոցառումներին, էքսկուրսիաներին, իրենց ձեռքի աշխատանքները ցուցադրում պատկերասրահում:</p> <p>-Գրադարանը համալրված ուսումնասօժանդակ նյութերով:</p> <p>-Հաղթահարված է ներառականությունը խաթարող սոցիալական խոչընդոտները:</p> <p>-ԿԱՊԿՈԻ սովորողները մասնակցում են երկարօրյա ուսուցմանը: Մասնակցում խմբակներին:</p> <p>-Անվճար սնունդ են ստանում 1-4-րդ դասարանի աշակերտները:</p> <p>-Ստեղծվել են հավասար հնարավորություններ և՛ դասարանային պայմաններում, և՛ հոգեբանական մակարդակում: Դասղեկները սովորողների մեջ ձևավորում են սոցիալական հմտություններ ու կարողություններ, որոնք նրա ներառումը հասարակության մեջ դարձնում է իրատեսական:</p>	<p>մեթոդներ կարողունակ ուսումնական գործընթաց կազմակերպելու համար, քիչ են իրականացնում համատեղ դասեր, տարբերակված ուսուցում:</p> <p>-Հանդիպում են խոչընդոտներ դիտարկման արդյունքում բացահայտված կրթության առանձնահատուկ կարիք ունեցող սովորողի համաձայնությունը ստանալու հետ և հետագա գործընթացը կազմակերպելու համար: Օճողները հրաժարվում են ընդունել, որ իրենց երեխան ունի զարգացման խնդիր:</p> <p>-Քիչ թվով են իրականացվում ներառական կրթությանը առնչվող դասղեկի ժամեր, քննարկումներ, ֆիլմերի դիտումներ, զրույցներ:</p> <p>-Ոչ միշտ են բացահայտվում բուլինգի դեպքերը:</p> <p>-Սովորողներին, ծնողներին և ուսուցիչներին անհրաժեշտ են գիտելիքներ և հմտություններ՝ պայքարելու բռնության, օտարման և հալածանքի դեմ:</p>
--	--

Տեխնոլոգիաներ և նորարարություններ

Համավարակի արդյունքում կարիք եղավ ուսուցումը կազմակերպել հեռավար ձևաչափով, որի արդյունքում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները մեծ արագությամբ ինտեգրվեց ուսումնական պրոցես: Թվային տեխնոլոգիաները հեղափոխել են կրթությունը՝ դարձնելով այն ավելի մատչելի, ձկուն և հասկանալի ներառական տարբեր կարիքներ և կարողություններ ունեցող սովորողների համար: Օրեցօր ավելացող թվային հարմարեցումները կրթության մեջ ներդնելով՝ հարմարավետ և մատչելի միջավայր է ստեղծվում բոլոր սովորողների համար: Դրանց օգտագործումը հնարավորություն տալիս խթանել համագործակցությունն ու հաղորդակցությունը ծնողների, մանկավարժների և սովորողների միջև:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>-ԴԿՏՀ-ը սահմանված կարգով վարում է էլեկտրոնային կառավարման և դասվանդման ապահովման մասնագետը:</p> <p>-Ուսուցիչները մասնակցել են համապատասխան վերապատրաստումների և տիրապետում են ՏՀՏ-ին:</p> <p>-Դասի ընթացքում կիրառում են տարբեր ՏՀՏ-ը գործիքներ:</p> <p>-Ժամանակին լրացում էլեկտրոնային մատյանը: Մասնակցում առկա և հեռավար դասընթացների,զարգացնում իրենց ՏՀՏ-ը գիտելիքները:Անցկացնում ինտեգրված դասեր:</p> <p>-Տիրապետում հանդիպումների էլեկտրոնային հարթակներին:</p> <p>-Բնագիտության ուսուցիչները օգտնվում ԿՏԱԿ-ի ռեսուրսներից:</p> <p>-Օգտվում «Պաշարների շտեմարան»-ի ռեսուրսներից,«Հեռավար ուսուցում» համակարգից:</p> <p>-Թվային կրթական կարևոր միջավայր է վեբկայքը և սոցիալական էջը:</p> <p>-Աշխարհագրության,պատմության,հայոց գրականության ուսուցիչները օգտվում «Աշխարհացույց » կրթական հարթակից:</p>	<p>-Ոչ բոլոր ուսուցիչները ունեն հմտություն և կարողություն ճիշտ օգտագործել ՏՀՏ-ն դասապրոցեսում,տնային աշխատանք հանձնարարելիս,հմտություն՝ ճիշտ օգտագործել էլեկտրոնային ռեսուրսները և վարել էլեկտրոնային մատյանը:</p> <p>-Ոչ բոլոր ուսուցիչները ցանկություն ունեն մասնակցել դասընթացների և զբաղվել ինքնակրթությանը:</p> <p>-Ինտերնետային կապը հասանելի չէ ամբողջ դպրոցում:</p> <p>-Կա համակարգիչների,վերտուալ գրատախտակի,պրոեկտորի կարիք:</p> <p>-Պասիվ է մասնակցությունը «Հայկական կրթական միջավայր» պորտալին:</p> <p>-Նվազել է կրթական կայքերի էլեկտրոնային ռեսուրսներից, մրցույթներից օգտվողների թիվը:</p> <p>-Քիչ է մասնակցությունը Եվրոպական դպրոցների էլեկտրոնային համագործակցության «Իթվինինգ պլույս Հայաստան » ծրագրին:</p> <p>-ՏՀՏ-ը ծառայեցնել մանկավարժական խնդիրների լուծմանը, դրանք օգտագործել մանկավարժական գործընթացում և սովորողին դարձնել մեղիակրող և մեղիաստեղծող:</p> <p>- Թվային տեխնոլոգիաների ինտեգրումը ներառական կրթության մեջ՝ հաղթահարվեն այնպիսի մարտահրավերներ,ինչպիսիք են թվային անջրպետը, հավասար հասանելիության ապահովումը և մանկավարժների համապատասխան վերապատրաստումները:</p>

2.2 Նպատակներ, խնդիրներ, գործողություններ, ժամկետ, անհրաժեշտ միջոցներ, արդյունքների չափման մեխանիզմներ, ռիսկեր, ռիսկերի կախման գործողություններ

Նպատակներ	Խնդիրներ
<p>1. Կրթության որակի ապահովում և ուսուցման արդյունավետության բարձրացում</p>	<p>1.1 Նոր ՀՊԶ-ով պայմանավորված փոփոխությունների իրագրելում և կատարում 1.2 Դասավանդման որակի բարձրացում 1.3 Սովորողներ ներուժի բացահայտում և նրանց ինքնադրսևորում 1.4 Ծնողների ներգրավում կրթական գործընթացում 1.5 Սովորողների համար ստեղծել տվյալ առարկայի լավագույն մասնագետների հետ շփվելու հնարավորություն 1.6 Աջակցել սովորողներին առարկայական օլիմպիադաներին ավելի պատրաստված մասնակցելու գործում 1.7 Աջակցել սովորողներին ԲՈՒՀ-երի ընդունելության քննություններին պատրաստվելու գործում 1.8 21-րդ դարի հմտություններ ունեցող սովորողի ձևավորում</p>
<p>2. Համընդհանուր ներառական սովորողակենտրոն և բազմակարծիք, մասնակցային կրթական միջավայրի ստեղծում:</p>	<p>2.1 Բոլոր սովորողների ինքնագարգացման և ինքնահրացման համար հավասար և մատչելի պայմանների ու հնարավորությունների ստեղծում 2.2 Օժտված երեխաների բացահայտման և նրանց զարգացման խթանում 2.3 Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման մատչելի միջավայր և խելամիտ հարմարեցում ներ ապահովելու, համապատասխան ծառայություններ տրամադրելու բավարար վիճակի ապահովում: 2.4 Ստեղծել այնպիսի սոցիալական միջավայր ,որը սովորողների շրջանում կնպաստի համակցության զարգացումը և դասարանի մշակույթի գործում բոլորի մասնակցությանը, արդար և հավասար իրավունքի ձևավորմանը, կբացառի բռնության, օտարման, հալածանքի դեպքերը 2.5 Համընդհանուր ներառական կրթություն կազմակերպելու պակաս մանկավարժների մոտ 2.6 Ծնողների խոչընդոտումը ԿԱՊԿՈՒ սովորողների բացահայտման հարցում և համապատասխան աջակցության տրամադրմանը 2.7 Սովորողների մոտ մեծացնել ներքին մոտիվացիան և ուսման նկատմամբ հետաքրքրությունը խրախուսել սովորողների հաջողությունները և տղաների ուսման նկատմամբ հետաքրքրությունը</p>

	2.8.Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ուսումնական գրքերով և ուսումնական պիտույքներով և այլ պարագաներով ապահովումը
3.Ուսումնական հաստատության անձնակազմի և սովորողների անվտանգ կենսագործունեության ապահովումը	3.1 Անվտանգության միջոցների ապահովում 3.2 «Աղետների ռիսկի կառավարման» պլանով նախատեսված միջոցառումների, վարժանքների անցկացումը 3.3 Ապահովել սովորողների ֆիզիկական, հոգևոր, սոցիալական առողջությունը, բարձրացնել սովորողների հոգեւոցիալական տոկոսությունը

N	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄ ԿԵՏ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԶԱՓՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ ՆԵՐ	ՌԻՍԿԵՐ	ՌԻՍԿԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ
1.1	1.Նոր ՀՊԶ-ով պայմանավորված փոփոխությունների քննարկում և կատարման արդյունքների վերլուծությունը մ/մ և ՄԻՆ-ում: Մշտադիտարկման իրականացում հանրակրթության չափորոշչային նոր պահանջները ուսուցիչների կողմից գործնականում կիրառելու և վերջնարդյունքներն ապահովելու ուղղությամբ:	2024-2029 ուստա րիներ	Ոլորտը կարգավորող օրենքներ, կարգեր, հրամաններ, որոշումներ, ուսումնական նյութեր, առարկայական չափորոշիչներ, ծրագրեր, թեմա տիկ պլաններ, մեթոդական գրականություն, ուղեցույցներ, առցանց ռեսուրսներ, նիստեր, սեմինարներ, քննարկումներ, հաշվետվություններ: Տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ, ուսուցիչներ:	Վերլուծություններ, արդյունավետության գնահատում: Գնահատում՝ կատարվել է ամբողջությամբ (գերազանց) -Բոլոր ուսուցիչները տեղեկացված են ՀՊԶ-ի շարունակական ներդրմանը և իրականացնում են ուսումնական պրոցեսում: -Մասամբ(լավ) Իրազեկվել է Նոր ՀՊԶ-ով պայմանավորված փոփոխությունները և ուսուցիչների կեսից ավելին ապահովել են վերջնարդյունքը: -Բավարար Իրազեկվել է Նոր ՀՊԶ-ով պայմանավորված փոփոխությունները, ուսուցիչները կեսից պակաս են ապահովել վերջնարդյունքը, և լիարժեք չի եղել վերահսկումը.	Նորամու ծությունների դժվար ընդունելը ուսուցիչների կողմից, ՀՊԶ-ի չընկալելը	Վերապատրաստող ուսուցիչների փորձի փոխանակումը, ՀՊԶ-ի կարողունակահեն ուսուցման առավելությունները և առանձնահատկությունները ներկայացնելը:

<p>-կազմակերպում սպորտային մրցաշարեր, իրականացնում համայնքային նախագծեր</p> <p>-համագործակցում համայնքի արվեստի դպրոցի, մարզային և համայնքային գրադարանների և երկրագիտական թանգարանի, թատրոնի հետ</p> <p>-կազմակերպում գրքերի քննարկում, ֆիլմերի դիտում, մասնակցում բնապահպանական նախագծերում և ստեղծում վերջնադյունք՝ ներկայացնելով հանրությանը:</p> <p>-համատեղ միջոցառումների, նախագծերի, սպորտային խաղերի անցկացում տարածքում գործող դպրոցների հետ</p> <p>-ստեղծում ներառական միջավայր՝ միջոցառումներին ընդգրկելով ԿԱՊԿՈՒ սովորողներին</p> <p>-դասմիջոցներին իրականացնում հերթապահություն, կազմակերպում ֆլեշմոբեր, ազգային պարերի ուսուցում</p> <p>-իրականացնում միջանցքների ձևավորում հաշվի առնելով աշակերտների հետաքրքրությունը</p> <p>2. Բոնության, օտարման և հալածանքի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպում համաժողովներ, սեմինարներ, կլոր-սեղաններ, քննարկումներ</p> <p>3. Դպրոցական բուլինգի թեմայով հանդիպումների կազմակերպում հոգեբանի, ոստիկանության, ՀԿ-</p>			<p>պաշտպանված են սովորողների կրթական, սոցիալական, առողջապահական շահերը:</p> <p>-Բավարար</p> <p>- ԱՄ-ի աշխատանքը բավարար է:</p> <p>Սովորողները որոշակի տեղեկացված են իրենց իրավունքներից :</p>		
--	--	--	---	--	--

<p>ների հետ («Գավառ ռեստարտ», «Կանանի», «Լիբերալ քաղաքականության ինստուտ», «Հուլիսի կամուրջ») 4.«Առողջ ապրելակերպ», «Անվտանգ համացանց» թեմայով նախագծերի իրականացում</p>					
--	--	--	--	--	--

6.1. Հաստատության առկա շենքային պայմանների և նյութական ռեսուրսների նպատակային գործածությունը

Ենթակառուցվածքներ

Շենքի տեսակ, մակերես	Տիպային, 5080,60 քմ
Բակ, մակերես	8600 քմ
Ջրամատակարարում	Շուրջօրյա
Հերթայնություն	Միահերթ
Հարկայնություն	1-ին մասնաշենք՝ երկհարկ, 2-րդ մասնաշենք՝ եռահարկ, 3-րդ մասնաշենք՝ մեկ հարկ
Կոյուղացում	Կենտրոնացված
Էլեկտրամատակարարում	Շուրջօրյա
Գազամատակարարում	Ջեռուցման (սեզոնային)
Ջեռուցում՝ 1-ին մասնաշենք Կաթսայատուն	Ընդհանուր ջեռուցման համակարգ. ջեռուցման ամփսների ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին
Ջեռուցում՝ 2-րդ մասնաշենք, ճաշարան	Անհատական ջեռուցման վառարաններ. ջեռուցման ամփսների ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին
Մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ, 2-րդ մասնաշենքի միջացքներ	Չեն ջեռուցվում
Ինտերնետ	Մալուխների միջոցով հասանելի 2-րդ մասնաշենքի 2-րդ հարկում

Արդյունավետ ուսումնադաստիարակչական գործընթաց կազմակերպելու համար կարևոր է հաստատության շենքային պայմանները:

	Քանակ	Մակերես	Վերանորոգման կարիք	Առկա գույք	Ուսումնական նյութեր	Լրացուցիչ կարիքներ
Առանձնասենյակներ	3	162քմ	Լավ վիճակում	Տնօենի առանձնասենյակ - աթոռ, սեղան, գրապահարան, տպիչ, համակարգիչ Ուսուցչանոց-4 պահարան, 2 բազմոց, մեծ սեղան, 5 փոքր սեղան-10 աթոռ: Գործավարի և էլեկտրոնային	Գրականություն, ուսումնական նյութեր	3 նոր համակարգիչ, պահարաններ

				կառավարման և դասավանդման ապահովման մասնագետի, գործավարի, հաշվապահի առանձնասենյակ-1 դյուակիր համակարգիչ, 1 տպիչ, 2 մեծ սեղան, 3 պահարան		
Դասասենյակներ Գործող`21	24	1320 քմ 888քմ	Մասնակի վերանորոգված	Ապահովված են սեղան – աթոռով, գրապահարանով, ուսուցչի սեղան-աթոռով, գրատախտակով: 2 դասասենյակներում հետուստացույց, մեկում ինտերակտիվ գրատախտակ:	Գրականություն, ուսումնական նյութեր	3 դասարանի դռները, 10 լուսամուտ փոխելու կարիք: Համա կարգիչներ, ինտերակտիվ գրատախտակներ
Համակարգչային սենյակ	1	72քմ	Ընթանում է համակարգչային դասասենյակի վերանորոգման և վերազինման գործընթացը, որը թույլ կտա ենթակառուցվածքը դարձնել առավել ինտերակտիվ և տեխնոլոգիական:	12 դյուրակիր համակարգիչից օգտագործման ենթակա է 5-ը, 1 պրոեկտոր, տպիչ,	Գրականություն, ուսումնական նյութեր	Նոր համակարգիչներ, պրոեկտոր, տպիչ, ինտերակտիվ գրատախտակներ:
Գրադարան	1	72քմ	Վերանորոգման կարիք, չունի ընթերցասարահ	10 աթոռ, մեծ սեղան, գրապահարաններ, 1 համակարգիչ	Գեղարվեստական գրքեր-6700 Տեղեկատվական գրքեր-380 Ուսումնամեթոդական գրքեր-500 Ամսագրեր-215	Նոր գրականության կարիք, էլեկտրոնային ռեսուսներ

Հանդիսությունների մեծ դահլիճ	1	252քմ	Վերանորոգված է դպրոցի բարերար Ս.Նաջարյանի կողմից	Նստարաններ 220 տեղի համար նախատեսած	-	Երաժշտական գործիքներ
Հանդիսությունների փոքր դահլիճ	1	72քմ	Վերանորոգված դպրոցի բարերար Ռոբերտ Բեքմեն Բրինի կողմից	Նստարաններ-20	-	Նստարանների կարիք
Նախակրթարանի խմբասենյակ, խաղասենյակ, հանդերձարան, սանհանգույց	2	820,8 քմ	ԾԻԳ-ի շնորհիվ վերանորոգված	2 պահարան, 7 հագուստի պահարան, 10 սեղան, 34 աթոռ, բազմոց, 2 գրատախտակ, հեռուստացույց, գորգ, փոշեկուլ	Գրականություն, ուսումնական նյութեր	Երաժշտական տեխնիկա
Սպորտ դահլիճ	1	288քմ	Վերանորոգված	2 բասկետբոլի շիթ, 2 պտտակաձող, 2 այծիկ, մարմնամարզության պատ, պարան, կամուրջ, 6 ներքնակ, թռիչքի կազնակ, շվեդական պատ	Սպորտլանդիայի պարագաններ, գնդակ	Գնդակներ, վոլեյբոլի գնդակ
ՆՋՊ-ի կարիներտն զենքի պահեստ	1	90քմ	Բավարար վիճակում	Սեղան-աթոռ 15-30, 3 պահարան, 2 երկաթյա պահարան, գրատախտակ, պատզարակ, 2 օդամղիչ հրացան,	Հակատանկային, հակահետևակային ուս. ականներ, 50 հակագազ, 2 ուս. գրանատ, 60 ուս փափուշտներ. 6 պաստառներ, ԴՊ228, ԴՊ-313, կյ-56, ՏՊՊ-66, Դպ-11Ե, Դպ-5Ե	ՅՈՒՆԻՍԵՖ-ի սարք, օդամղիչ հրացան:
Տեխնոլոգիայի դասասենյակ	1	72քմ	Բավարար վիճակում	2 մեծ սեղան, 2 ձեռքի և 2 ոտքի կարի մեքենաներ, 1 կարի մեքենա «Բարձունք» ՀԿ-ի կողմից, 3 պահարան		Կարի պարագաններ, Պաստառներ, փայտի և մետաղամ

						շակման գործիքներ, խոհանոցային պարագաներ, գծագրության պարագաներ
Շախմատի դասասենյակ	1	54քմ	Լավ վիճակում	12-24 շախմատի սեղան-աթոռ, շախմատի ժամացույց, ցուցանակ, ցուցադրական գրատախտակ	15 շախմատի խաղատախտակ	Պարկերով խաղատախտակ
Լաբորատորիա	3	134քմ	Ֆիզիկայի և կենսաքիմիայի լաբորատորիաները վերանորոգման ընթացքի մեջ են ,որը կնպաստի ԲՏՃՄ ուսումնական բնագավառի առարկաների արդյունավետ ուսուցմանը:	Քիմիայի –5 հատ լաբորատոր պահարաններ,ցուցադրական սեղան, աթոռ,քարշիչ պահարան,լաբորատորիայի ամանեղեն, «Ջինիաշյան» հիշատակի հիմնադրամի և Վորլդ Վիժեն-ի ծրագրերով ձեռք բերված ջրի թորման սարք,քիմ. ամանեղեն,կալան, 4 փորձի պատվանդան: Ֆիզիկա-4 լաբորատոր պահարան,10 ֆիզիկական օրենք ցույց տվող սարքեր,1կալան, «Ջինիաշյան» հիմնադրամի և Վորլդ Վիժեն-ի ծրագրերով ձեռք բերած մագնիսական վահակ,էլեկտրոլիզի սարք,հոսանքի կարգավորիչ,թեք հարթություն	Քիմիա-քիմիական նյութեր: Ֆիզիկա-«Ջինիաշյան» հիշատակի հիմնադրամի և Վորլդ Վիժեն-ի ծրագրերով ձեռք բերած ֆիզիկական փորձերի ռեսուրսներ: Կենսաբանություն-այքի,երիկամների,սրտի,մարդու մոդել, հերբարիումներ, սերմերի հավաքածու,կենդանիների մոդելներ:	Քիմիա-լաբորատորիա յի ամանեղեն, քիմիական նյութեր, պաստառներ: Կենսաբանություն-պաստառներ, մարդու փափուկ մոդել, մանրադիտակ:(Ընթանում է լաբորատորիաների վերանորոգում,վերագրի նում)

				Ճախարակով, կենտրոնախույս մեքենա, դրոսելային կոճ: Կենսաբանություն-2 պահարան, աթոռ-սեղան, մանրադիտակ:		
Ռեսուրս սենյակ	1	54քմ	Ունի վերանորոգման կարիք	Սեղան, աթոռ, պահարան	Ուսումնական ռեսուրսներ	Խելամիտ հարմարացումներ, ուսումնական ռեսուրսներ, դիդակտիկ նյութեր, բազմոց
Պարի դասասենյակ	1	90 քմ	Գտվում է լավ վիճակում	Հեռուստացույց, տակդիր, հայլի		Ձողեր, երաժշտական գործիք
Ճաշարան խոհանոցային, պահեստային հատվածով. չկա սննդի կետ	3	40 քմ	Վերանորոգված է, ՄԱԿ-ի «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակում նախակրթարանի և 1-4 դասարանի աշակերտները ստանում են տաք սնունդ, առկա է տաք և սառը ջուր:	Համալրված խոհանոցային պարագաններով, 2 սառնարան, խմորի ունց, 4 լվացարան, էլեկտրական վառարան, գազօջախ, 2 դարակաշար, 2 մետաղյա սեղան		Սեղան, աթոռները հնամաշ են, սպասք
Բուժկետ	1	18քմ	Սենյակը գտվում է բավարար վիճակում	Աշխատանքային սեղան, թախտ, հասակաչափ, դեղատնային պահարան, ճնշման ռետինալար, բժշկական կշեռք, աթոռ, գրապահարան, առաջին անհրաժեշտության պարագաներ	Առաջին բուժօգնության միջոցների և դեղերի առկայություն	Բազմոց, դեղորայքի պահարան

Սանհանգույց	5	90քմ	Երկու մասնաշենքերի 1-ին հարկում՝ նախատեսված աղջիկների և տղաների համար (լավ վիճակում)	5 զուգարանակոնք, 1 օդարակիչ, 1 հայելի, 4 լվացարան	Համապատասխան սանիտարահիգիենիկ նյութեր	Բացակայում է հաշման դամների համար նախատեսված սանհանգույց
--------------------	---	------	--	---	---------------------------------------	--

Ուսումնական հաստատության ֆիզիկական միջավայր պետք է լինի գրավիչ, անվտանգ, առողջ, ներառական և սովորողին խթանի սովորել, լինել ինքնուրույն և զբաղվել հետազոտությամբ: Այսինքն, կարևոր է ապահովել ֆիզիկական միջավայրի անվտանգությունն ու նրա վերահսկողությունը, որ այն համապատասխանեցված և հարմարեցված լինի յուրաքանչյուր երեխայի կարիքներին, համապատասխանի նրա հետաքրքրություններին, հակումներին ու պահանջմունքներին, նրանց բազմազան գործունեության համար լինի գրավիչ:

Ուսումնական հաստատության շենքային պայմանների և նյութական ռեսուրսների նպատակային գործածության ուժեղ և թույլ կողմերը

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
<p>Հաստատության տարածքը գտնվում է ավտոճանապարհային գոտուց բավարար հեռավորության վրա և անվտանգ է սովորողների ազատ տեղաբժման համար: Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին: Հաստատության տարածքը մաքուր է, և կատարվում է աղբահանություն:</p> <p>Հաստատության սովորողների թիվը համապատասխանում է հաստատության նախագծային հզորությանը և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին:</p> <p>Դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում է նախագծային և սահմանված նորմերին:</p> <p>Դասասենյակներում մեկ սովորողին ընկնող մակերեսը համապատասխանում է նորմերին: Շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր: Կա 8 կրակմարիչներ, կահույքը ամուր է և բարվոք վիճակում, բոլոր հարկերում փակցված են տարհանման պլան-սխեմաներ:</p> <p>Վերանորոգված մարզադահլիճ, որտեղ իրականացվում են ոչ միային ֆիզկուլտուրայի դասեր, այլև բազմաբնույթ սպորտային միջոցառումներ, համայնքային խաղեր:</p> <p>Փոքր խաղահրապարակ, որը վերանորոգվել սովորողների համայնքային նախագծի շնորհիվ:</p> <p>Հիմնանորոգված հանդիսությունների մեծ և</p>	<p>Հաստատության տարածքը ամբողջական ցանկապատված չէ:</p> <p>Հաստատության շենքը ունի կապիտալ վերանորոգման կարիք. տանիքը անմխիթար վիճակում է: Շենքը հարմարեցված չէ ԿԱՊԿՈՒ սովորողների անվտանգ տեղաշարժին և ուսուցումը ապահովող պայմաններին (թեք հարթակներ, լայն դռներ):</p> <p>Հաստատության սովորողները «ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնական դասընթացներն անց են կացնում հաստատության մարզադահլիճում միայն տաք օրերին՝ ջեռուցման բացակայության պատճառով:</p> <p>Բացօթյա մարզահրապարակի անմխիթար վիճակ:</p> <p>Միջացքների պատուհանների անմխիթար վիճակ:</p> <p>Դասասենյակներից 3-ը ունեն վերանորոգման կարիք:</p> <p>Ջրատար և կոյուղատար համակարգերի մաշվածություն: Չունի արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգ:</p> <p>Գրադարանի բարենորոգման կարիք, նոր գրաֆոնդի սակավություն, էլեկտրոնային ռեսուրսների կարիք:</p> <p>Ընթերցասրահի բացակայություն:</p>

փոքր դահլիճներ՝ համապատասխան գույքով, որտեղ իրականացնում են բազմաբնույթ միջոցառումներ, հանդիպումներ, ժողովներ, սեմինարներ: Դպրոցի 5 դասասենյակների պատուհաններ վերանորոգվել են «Կանայք կլիմայում և էներգետիկայում» շտաբի միջոցներով (2000 000 ՀՀ դրամ):

21 դասասենյակներից 15-ը վերանորոգված են, որոնք կահավորված են համապատասխան գույքով: 1 վերտուալ գրատախտակ, շարժական պրոեկտոր: Վերանորոգված ճաշարան՝ կահավորված համապատասխան պարագաներով, սառը և տաք ջրի առկայություն, որտեղ տաք սնունդ են ստանում նախակրթարանի և 1-4-րդ դասարանի սովորողները: (ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի, բյուջետային և համայնքային միջոցների հաշվին (վերանորոգման ծառայությունները կատարվել են համայնքի անդամների կողմից անվճար)):

Հիմնանորոգված նախակրթարան՝ 2 սենյակով և համապատասխան գույքով: (ՕԻԳ-ի և ծնողական համայնքի անմիջական օժանդակությամբ): Աշխատանքային սենյակները կան տպիչներ և համակարգիչներ: Տեխնոլոգիայի, շախմատի, պարարվեստի կաբինետներ մասամբ վերանորոգված, որտեղ իրականացնում են ոչ միայն դասեր, այլ բազմաբովանդակ խմբակներ:

Դպրոցը ունի շուրջօրյա ջրամատակարարում, ինտերնետային կապ, կոյուղացում: Ջեռուցման լոկալ համակարգ 1-ին մասնաշենքում:

Սանհանգույցի 4 կետ:

Գրադարան՝ ուսումնամեթոդական, գեղարվեստական, տեղեկատվական գրականությամբ, որտեղ իրականացվում են դաս-միջոցառումներ, ընթերցված գրքերի քննարկումներ:

Բուժկետ, որտեղ բուժքույրը պարբերաբար իրականացնում է բուժզննում, առաջին օգնություն :

Փոքր դպրոցամերձ այգի:

Կանաչ գոտի (200 և ավել դեկորատիվ ծառեր և թփեր), որը նպաստում է բնապահպանական գիտակցության ձևավորմանը: «Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ-ի կողմից Հայաստանում Չեխիայի Հանրապետության դեսպանության ֆինանսական աջակցությամբ:

Բացօթյա դասերի համար նախատեսված գոտի բակում:

Ընթանում է ֆիզիկայի, կենսաքիմիայի, աշխարհագրության, համակարգչային լաբորատորիաների վերանորոգում և վերազինում: Կրթական պաստառների, ցուցանակների շարունակական թարմացում:

Ճաշարանի սեղան -աթոռները հնամաշ են: ՆԶՊ-ի, տեխնոլոգիայի դասասենյակների վերանորոգման և վերազինման անհրաժեշտություն: Մարզադահլիճի սպորտային գույքի կարիք: Հանդերձարանների բացակայություն: Կերպարվեստի, երաժշտության և արվեստի դասերի համար սենյակների բացակայություն: Յուրաքանչյուր հարկում չկա աղջիկների և տղաների սանիտարական հանգույցներ: Բացակայում է հաշմանդամների համար նախատեսված սանհանգույց: Չեն ջեռուցվում երկրորդ մասնաշենքի միջացքները, մեծ հանդիսությունների դահլիճը, մարզադահլիճը: Միայն առաջին հարկերն ունեն սանհանգույցներ: Չկա հաշմանդամների համար նախատեսված սանհանգույց: Չկա սննդի կետ: Ռեսուրս սենյակը գույքով և ուսումնական նյութերով համալրման կարիք ունի: Մեծ դահլիճը երաժշտական գործիքների, փոքր դահլիճը նստարանների կարիք ունի: Մասնագիտական կողմնորոշման կենտրոնի բացակայություն: Այգում մշակաբույսերի տեսակների սակավություն: Բուժկետը գույքի թարմացման կարիք ունի: Ապաստարանի բացակայություն:

6.2 Նպատակներ, խնդիրներ, գործողություններ, ժամկետ, անհրաժեշտ միջոցներ, արդյունքների չափման մեխանիզմներ, ռիսկեր, ռիսկերի կախման գործողություններ

N	ՆՊԱՏԱԿ	ԽՆԴԻՐՆԵՐ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԿԵՏ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ	ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԶԱՓՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	ՌԻՍԿԵՐ	ՌԻՍԿԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1	Հանրակրթական ուսումնական հաստատության անվտանգ և արդյունավետ գործունեության անհրաժեշտ պայմանների ապահովում	Շենքի ֆիզիկական պայմանների բարելավում	1. Դիմել համակարգողին՝ օրենքով սահմանված կարգով ստացած միջոցները օգտագործել աստիճանաբար, ըստ առաջնայնության տանիքի վերանորոգման, լոկալ ջեռուցման, միջացքների	2024-2029 Աստիճանաբար, ըստ առաջ	Բյուջետային կամ օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցներ, աշխատանքային նախագիծ, նախահաշիվ, գնման գործընթացի կազմակերպում, շինարարական	Կատարվել է -ամբողջությամբ (գերազանց) Ապահովված է անվտանգ ջեռուցման համակարգ, տանիքը գտվում է բարվոք վիճակում: Բոլոր դասասենյակները և միջացքները ապահովված են ջերմաստիճանային համապատասխան սանիտարահիգիենիկ նորմերին: Խնայվել են	Ոչ բավարար ֆինանսներ, ֆինանսական միջոցների ոչ արդյունավետ օգտագործում: Թույլ համագործակց	Համակարգողի հետ համագործակցության արդյունքում ստեղծել ֆինանսական միջոցների պլանավորում և ծախսերի արդյունավետ կառավարում :

		<p>պատուհանները եվրոպատուհաններով փոխելու համար:</p>	<p>նայնություն</p>	<p>կազմակերպության պայմանագրի կնքում, համապատասխան շինարարական և տնտեսական նյութեր, համապատասխան գույք, պարագաներ :</p>	<p>Էլեկտրական էներգիա և գազ: -Մասամբ(լավ) Մասամբ է իրականացվել տանիքի վերանորոգումը, լոկալ ջեռուցումը, է միայն դասասենյակներում ,փոխվել են միջացքների պատուհանների կեսից ավելին: Բավարար Սահմանված ժամկետների խախտումներով, ֆինանսական միջոցների գերծախսով որակապես ցածր իրականացվել է վերանորոգում: Լոկալ ջեռուցում է միայն դասասենյակներում, փոխվել են միջացքների պատուհանների փոքր մասը:</p>	<p>ցույթուն հիմնադրամների, բարերարների հետ: Ֆորս մաժորային իրավիճակ:</p>	<p>Պետական միջոցների գույքընթացն օրենքով չարգելված ֆինանսական միջոցներ, դիմել հիմնադրամների, բարերարների: Մշտապես կիրառել վերհսկման մեխանիզմներ, մշտադիտարկել արդյունքները: Իրավիճակից բխող, խնդիրների կանխատեսում, աշխատանքների նախագծում, արդյունավետ տարբերակի ընտրում, իրականացում:</p>
		<p>2. Դիմել Գավառի համայնքապետարանին փողոցի ջրահեռացումը կազմակերպելու համար</p>	<p>2024-2025</p>	<p>Ֆինանսական, մարդկային, տեխնիկական ռեսուրսներ:</p>	<p>Կատարվել է -ամբողջությամբ (գերազանց) Փողոցի անձրևաջրերը չեն ողողի դպրոցի բակը և մարզահրապարակը կօգտագործվի ֆիզկուլտուրայի դասեր անցկացնելու համար : -Մասամբ(լավ)</p>	<p>Ոչ բավարար ֆինանսներ, թույլ համագործակցություն համայնքա</p>	<p>Համագործակցային միջավայրի ընդլայնում համայնքապետարանի հետ</p>

						Վերանորոգումը իրականացվել է մասամբ: -Բավարար Վերանորոգումը իրականացվել է ցածր որակով:	պետա րանի հետ	
			3.ՄԱԿ-ի Պարենի Համաշխարային Ծրագրով տեղադրված արևային ֆոտովոլտային կայանի էլեկտրաէներգիան օգտագործել մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի ջեռուցումը ապահովելու համար:	2025-2026	Արևային մարտկոցներ, ջեռուցման համակարգ, տեխնիկական և մարդկային ռեսուրսներ: ՊԲ, ՀՀ կառավարության կողմից իրականացվող ծրագրեր, հովանավորներ, դպրոցի խնայողություններ, բարերարներ, գործընկերներ, ծնողական համայնք:	Վատարվել է -ամբողջությամբ (գերազանց) Մարզադահլիճը և հանդիսությունների դահլիճը ունեն համապատասխան պայմաններ դասերի անցկացման համար՝ ապահովված է ջերմաստիճանային համապատասխան սանիտարահիգիենիկ նորմեր: Նպաստել է էներգիախնայող և էներգիաարդյունավետ համակարգի ձևավորմանը : Մասամբ(լավ) Մարզադահլիճը ունի ջերմաստիճանային համապատասխան պայմաններ դասերի կեսից ավելին դահլիճում անցկացման համար: Հանդիսությունների դահլիճում կարողանում են անցկացնել միջոցառումներ, բայց որոշ տարածքում ավելի ցածր ջերմաստիճան է: -Բավարար Մարզադահլիճը և հանդիսությունների դահլիճը ունեն բավարար	Ոչ բավարար ֆինանսներ , ֆինանսական միջոցների ոչ արդյունավետ օգտագործում: Թույլ համագործակցություն հիմնադրամների, բարերարների հետ: Ֆորս մաժորային իրավիճակ:	Համակարգողի հետ համագործակցության արդյունքում ստեղծել ֆինանսական միջոցների պլանավորում և ծախսերի արդյունավետ կառավարում : Պետական միջոցների զուգընթաց օրենքով չարգելված ֆինանսական միջոցներ, դիմել հիմնադրամների, բարերարների:

				ջերմաստիճանային պայմաններ: Ամբողջ դահլիճի տարածքում ջերմաստիճանը հավասար չէ:			
		4. Ուսումնական լաբորատորիաների, (ընթացքի մեջ է ուսումնական լաբորատորիաների վերանորոգումը և վերազինումը), գրադարանի, ՆՁՊ-ի և տեխնոլոգիայի դասասենյակների վերանորոգում:	2024-դեկտեմբեր - ուսումնական լաբորատորիաներ: 2025-2027 գրադարան, ՆՁՊ-ի և տեխնոլոգիայի դասասենյակներ:	Բյուջետային կամ օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցներ, դպրոցի կողմից խնայողություններ: Տնօրենի կողմից ներկայացված կարիք, համակարգողի կողմից մշակված նախագիծ, լիազորմամբ կողմից տրված համաձայնություն, կառուցման նախագիծ, նախահաշիվ, գնումներ, շինարարական աշխատանքներ կատարելու համար պայմանագրեր, շինանյութ, անհրաժեշտ այլ գործիքներ:	Կատարվել է -ամբողջությամբ (գերազանց) Սահմանված ժամկետում իրականացվել են որակյալ վերանորոգում: (Ուսումնական լաբորատորիաներ, ՆՁՊ-ի և տեխնոլոգիայի դասասենյակներ, գրադարան): Մասամբ (լավ) Սահմանված ժամկետի խախտումով իրականացվել են մասամբ վերանորոգում: (Ուսումնական լաբորատորիաներ, ՆՁՊ-ի և տեխնոլոգիայի դասասենյակներ, գրադարան): -Բավարար Սահմանված ժամկետի խախտումներով իրականացվել են ոչ որակյալ վերանորոգում: (Ուսումնական լաբորատորիաներ, ՆՁՊ-ի և տեխնոլոգիայի դասասենյակներ, գրադարան):	Ոչ բավարար ֆինանսներ, ֆինանսական միջոցների ոչ արդյունավետ օգտագործում: Թույլ համագործակցություն հիմնադրամների, բարերարների հետ: Ֆորս մաժորային իրավիճակ:	Վստահելի համագործակցային միջավային հիմնադրամների հետ: Մասնակցություն դրամաշնորհային ծրագրերի: Բարձր պատասխանատու վերաբերմունքի պահանջում դպրոցական շենքի, գույքի, տեխնիկայի նկատմամբ և անվտանգության կանոնների պահպանում : Մշտապես կիրառել վերհսկման մեխանիզմներ, արդյունքների մշտադիտարկում: Իրավիճակից բխող, խնդիրների կանխատեսում, աշխատանքների նախագծում, արդյունավետ տարբերակի

							ընտրում, իրականացում:
		5. Ցանկապատի վերանորոգում	2025- 2026	Ցանկապատ և մարդկային ռեսուրսներ:	Կատարվել է -ամբողջությամբ (գերազանց) Ցանկապատը ամբողջությամբ վերանորոգվել է,անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժը: Մասամբ(լավ) Ցանկապատը վերանորոգվել է մասամբ: -Բավարար Վերանորոգվել է ցանկապատի փոքր հատված:	Համագոր ծակցու թյան ցածր մակար դակ, ծնողների անտար բերություն	Համագործակ ցություն ծնողների հետ: Պետական միջոցների զուգընթաց օրենքով չարգելված ֆինանսական միջոցներ:
		6. Անվտանգության միջոցների ձեռքբերում: միջոցներ:	2025- 2026	Բյուջետային կամ օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցներ, գնման գործընթացի կազմակերպում, պայմանագրի կնքում համապատասխան գույք՝ շարժական ռադիոկապի սարք, բարձրախոսային համակարգ, պատգարակ, հզոր լապտեր:	Կատարվել է -ամբողջությամբ (գերազանց) Ձեռք են բերվել բոլոր անհրաժեշտ անվտանգության միջոցները Մասամբ(լավ) Ձեռք են բերվել անհրաժեշտ անվտանգության միջոցների մեծ մասը: -Բավարար Ձեռք են բերվել անհրաժեշտ մի քանի անվտանգության միջոցներ:	Ոչ բավարար ֆինանս ներ, ֆինանսա կան միջոցների ոչ արդյունա վետ օգտագոր ծում:Թույլ համագործ ակ ցություն հիմ նադրամ ների,բարե րարների հետ:	Ֆինանսական միջոցների պլանավորում և ծախսերի արդյունավետ կառավարում

						Ֆորս մաժորային իրավիճակ:	
	7. Դիմել համակարգողին օրենքով սահմանված կարքով ստացած միջոցները օգտագործել էլեկրալարերի և էլեկտրասարքերի թարմացման, ջրատար և կոյուղատար համակարգը թարմացման համար	2025- 2027	Բյուջետային կամ օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցներ, գնման գործընթացի կազմակերպում, պայմանագրի կնքում համապատասխան սարքեր, լարեր, կոյուղատար համակարգ :	Կատարվել է -ամբողջությամբ (գերազանց) Անվտանգ է էլեկտրահամակարգը, ջրատար և կոյուղատար համակարգը լիովին նորոգված է: Մասամբ(լավ) էլեկտրահամակարգը, ջրատար և կոյուղատար համակարգը մասամբ նորոգված է: -Բավարար էլեկտրահամակարգը, ջրատար և կոյուղատար համակարգը գտնվում է բավարար վիճակում:	Ոչ բավարար ֆինանս ներ, ֆինանսա կան միջոցների ոչ արդյունա վետ օգտագոր ծում: Ֆորս մաժորային իրավիճակ:	Պետական միջոցների զուգընթաց օրենքով չարգելված ֆինանսական միջոցներ	
	8. Համակարգողի հետ համագործակցելով՝ ապահովել դպրոցի ֆիզիկական միջավայրի հարմարեցումները և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար անհրաժեշտ անհատական/ խելամիտ հարմարեցումները	2024- դեկտեմ բեր- խելա միտ հար մարե ցումներ: 2025- 2026 -ֆիզիկա կան միջա վայրի հար մարե ցում ներ:	Բյուջետային կամ օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցներ, գնման գործընթացի կազմակերպում, պայմանագրի կնքում համապատասխան գույք և հարմարեցումներ:	Կատարվել է -ամբողջությամբ (գերազանց) ԿԱՊԿ ունեցող սովորողների համար ստեղծված են ապահով ֆիզիկական միջավայր, խելամիտ հարմարացումներ՝ անվտանգ տեղաշարժի և ուսուցում ապահովող պայմաններ: Մասամբ(լավ) ԿԱՊԿ ունեցող սովորողների համար ստեղծված են ֆիզիկական	Ոչ բավարար ֆինանս ներ, ֆինանսա կան միջոցների ոչ արդյունա վետ օգտագոր ծում: Թույլ համագոր ծակ ցություն հիմ նադրամ	Պետական միջոցների զուգընթաց օրենքով չարգելված ֆինանսական միջոցներ: Դիմել հիմնադրամ ների, բարերար ների:	

						միջավայրի որոշակի հարմարացումներ, ինելամիտ հարմարացումներ՝ անվտանգ տեղաշարժի և ուսուցում ապահովող պայմաններ: -Բավարար ԿԱՊԿ ունեցող սովորողների համար ստեղծված են ֆիզիկական միջավայրի և ինելամիտ մի քանի հարմարացումներ:	ների,բարե ռարների հետ: Ֆորս մաժորային իրավիճակ:	
2	Հանրակրթական ուսումնական հաստատությունում նյութատեխնիկական հագեցվածություն ապահովում, նոր չափորոշիչ և առարկայական ծրագրերին համապատասխան հրաժեշտ գույքով և սարքավորումներով ապահովում:	1.Նյութատեխնիկական բազայի համալրում	1. Մարզական գույքի ձեռքբերում	2024-2025	Բյուջետային ֆինանսական միջոցներ, գնման գործընթացի կազմակերպում, պայմանագրի կնքում, համապատասխան գույք, պարագաներ	Կատարվել է -ամբողջությամբ (գերազանց) Թենիսի սեղան, գնդակներ, բասկետբոլի, վոլեյբոլի ցանցեր Մասամբ(լավ) Ձեռք է բերվել մարզական գույքի կեսից ավելին: -Բավարար Ձեռք է բերվել մարզական գույքի մի փոքր մասը:	Ոչ բավարար ֆինանսներ, ֆինանսական միջոցների ոչ արդյունավետ օգտագործում: Թույլ համագործակցություն հիմնադրամների, բարե ռարների հետ: Ֆորս մաժորային իրավիճակ:	Պետական միջոցների գույքընթացի օրենքով չարգելված ֆինանսական միջոցներ: Մասնակցություն մրցույթների, որի արդյունքում ձեռք կբերեն սպորտային գույք:
			2. Դիմել ՏԻՄ-ին գրադարանի պայմանների	2024-2026	Գրաֆոնդ, պահարաններ	Կատարվել է -ամբողջությամբ (գերազանց) Ստեղծված է որակյալ կրթական	Ոչ բավարար ֆինանսներ, ֆինանսական	Գրողների, գրադարանների համագործակցու

			<p>բարելավման և գրաֆոնդի համալրման համար</p>			<p>միջավայր. գրադարանը լիովին համալրված է գրականությամբ, գույքով, սարքավորում ներով: Մասամբ(լավ) Ստեղծված է կրթական միջավայր. գրադարանը մասամբ է համալրված գրականությամբ, գույքով, սարքավորում ներով: -Բավարար Ստեղծված է բավարար կրթական միջավայր. գրադարանը համալրված սահմանափակ գրականությամբ, գույքով, սարքավորումներով:</p>	<p>կան միջոցների ոչ արդյունավետ օգտագործում:Թույլ համագործակցություն հիմնադրամների,բարերարների հետ: Ֆորս մաժորային իրավիճակ;</p>	<p>թյան արդյունքում գրքերի նվիրատվություն դպրոցին:Մասնակցել նախագծերի,որոնց արդյունքում ստանալ մրցանակ գրքեր:</p>
			<p>3.Համագործակցելով պետական ծրագրերին և բնապահպանական ՀԿ-ներին՝ ընդարձակել դպրոցամերձ այգին,ջերմատան հիմնում:</p>	<p>2025-2026</p>	<p>Ծառեր,մշակաբույսեր, տեխնիկական միջոցներ:</p>	<p>Կատարվել է -ամբողջությամբ (գերազանց) Դպրոցամերձ այգին տալիս է իր բերքը և առողջ սնունդը օգտագործվում է ճաշարանում: Մասամբ(լավ) Դպրոցամերձ այգին տալիս է նախատեսված բերքի կեսից ավելին և առողջ սնունդը օգտագործվում է ճաշարանում: -Բավարար Դպրոցամերձ այգին տալիս է որոշակի բերք և առողջ սնունդը օգտագործվում է ճաշարանում:</p>	<p>Մարդկային ռեսուրսի պակաս:</p>	<p>Համայնքի և ծնողների աջակցությունը: Մասնակցություն դրամաշնորհային ծրագրերի: «Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ,EU4Sevan</p>

		<p>4. Ուսումնական լաբորատորիաների, ՆԶՊ-ի և տեխնոլոգիայի դասասենյակների անհրաժեշտ գույքով, ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերով ապահովելում:</p>	<p>2024-դեկտեմբեր-ուսումնական լաբորատորիաներ: 2025-2026 ՆԶՊ-ի և տեխնոլոգիա դասասենյակներ:</p>	<p>Ընթացքի մեջ է ուսումնական լաբորատորիաների կահավորումը : (ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ հիմնադրամի կողմից)</p>	<p>Կատարվել է -ամբողջությամբ (գերազանց) Ուսումնական լաբորատորիաները, ՆԶՊ-ի և տեխնոլոգիայի դասասենյակները հագեցված են անհրաժեշտ գույքով, ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերով: Մասամբ(լավ) Ուսումնական լաբորատորիաները, ՆԶՊ-ի և տեխնոլոգիայի դասասենյակները համալրված են կեսից ավելի անհրաժեշտ գույքով, ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերով: -Բավարար Ուսումնական լաբորատորիաները, ՆԶՊ-ի և տեխնոլոգիայի դասասենյակները համալրված են որոշ գույքով, ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերով:</p>	<p>Ոչ բավարար ֆինանսներ , ֆինանսական միջոցների ոչ արդյունավետ օգտագործում: Թույլ համագործակցություն հիմնադրամների, բարերարների հետ: Անպատասխանատու վերաբերմունք գույքի նկատմամբ: Ֆորս մաժորային իրավիճակ</p>	<p>Մասնակցել դրամաշնորհային ծրագրերի; Դիմել հիմնադրամների, մասնակցել նախագծերի, համագործակցություն ՏԻՄ-ի հետ: Բարձր պատասխանատու վերաբերմունքի պահանջում դպրոցական գույքի, տեխնիկայի նկատմամբ և անվտանգության կանոնների պահպանում :</p>
		<p>5. Դիմել համակարգողին օրենքով սահմանված կարքով ստացած միջոցները օգտագործել համակարգչային ապահովվածության</p>	<p>2024 դեկտեմբեր-համակարգչային դասասենյակի կահավորում: 2025-2029</p>	<p>Բյուջետային ֆինանսական միջոցներ, գնման գործընթացի կազմակերպում, պայմանագրի կնքում, համապատաս</p>	<p>Կատարվել է -ամբողջությամբ (գերազանց) Ուսումնական հաստատության համար ստեղծված են սովորողներին արդիական կրթություն տալու հավասար պայմաններ</p>	<p>Ոչ բավարար ֆինանսներ, ֆինանսական միջոցների ոչ արդյունավետ</p>	<p>Համակարգողի հետ համագործակցության արդյունքում ստեղծել ֆինանսական միջոցների</p>

			<p>բարելավման համար ինտերնետային հասանելի կապի ապահովում ամբողջ դպրոցում և, համակարգիչների և վերտուալ գրատախտակների և ձեռք բերում դասասե նյակների, գրադարանի, դահլիճի համար:</p>	<p>Համակարգչային սարքեր, վերտուալ գրատախտակների և ձեռք բերում դասասե նյակների, գրադարանի, դահլիճի համար:</p>	<p>խան գույք, պարագաներ: Ընթացքի մեջ է համակարգչային դասասենյակի վերազինումը: (ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ հիմնադրամ)</p>	<p>ապահոված յուրաքանչյուր սովորողի անհրաժեշտ էլեկտրոնային ուսումնական ռեսուրսներով, համակարգչային սարքով և ինտերնետային կապով: ՏՀՏ-ն ուսումնական գործընթացում ակտիվ օգտագործելու ուղղությամբ ուսուցիչների մասնագիտական գիտելիքները և հմտությունները զարգացել են: Ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ դասապրոցե ՏՀՏ-ն արդյունավետ օգտագործելու համար:</p> <p>Մասամբ (լավ) Ստեղծված է սովորողին անհրաժեշտ էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների կեսից ավելին, կան համակարգչային սարքեր և ինտերնետային կապով: ՏՀՏ-ն ուսումնական գործընթացում օգտագործվում է ուսուցիչների մասնագիտական գիտելիքները և հմտությունները զարգացելու, և ուսուցիչների կեսից ավելին</p>	<p>վեո օգտագործում: Թույլ համագործակցություն հիմնադրամների, բարերարների հետ: Անպատասխանատու վերաբերմունք գույքի նկատմամբ: Ֆորս մաժորային իրավիճակ</p>	<p>պլանավորում և ծախսերի արդյունավետ կառավարում: Պետական միջոցների գույքընթաց օրենքով չարգելված ֆինանսական միջոցներ; Դիմել հիմնադրամների, մասնակցել նախագծերի, համագործակցություն ՏԻՄ-ի հետ: Բարձր պատասխանատու վերաբերմունքի պահանջում դպրոցական գույքի, տեխնիկայի նկատմամբ և անվտանգության կանոնների պահպանում:</p>
--	--	--	--	--	---	---	---	---

					<p>օգտագործում է SՀS-ն</p> <p>դասապրոցեսում:-</p> <p>Բավարար</p> <p>Ստեղծված է սովորողին անհրաժեշտ սահմանափակ էլեկտրոնային ուսումնական ռեսուրսներ , կան բավարար համակարգչային սարքեր և ինտերնետային կապ:</p> <p>SՀS-ն ուսումնական գործընթացում օգտագործվում է մի քանի ուսուցիչների մասնագիտական գիտելիքները և հմտությունները զարգացելու, և ուսուցիչների փոքր մասն է օգտագործում SՀS-ն դասապրոցեսում:</p>			
			<p>6.Ճաշարանի կահավորում նոր սեղան-աթոռով, սպասքով:</p>	<p>2024-2026</p>	<p>Բյուջետային կամ օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցներ, դպրոցի կողմից խնայողություններ: Ճաշարանի սեղան-աթոռ, սպասք:</p>	<p>Կատարվել է -ամբողջությամբ (գերազանց)</p> <p>Ճաշարանը լիովին կահավորված է: Մասամբ(լավ)</p> <p>Ճաշարանը կահավորված է նոր սեղան-աթոռով մասամբ: Բավարար</p> <p>Ճաշարանը կահավորված է մի քանի նոր սեղան-աթոռով:</p>	<p>Ոչ բավարար ֆինանսներ, ֆինանսական միջոցների ոչ արդյունավետ օգտագործում: Թույլ համագործակցություն հիմնադրամ</p>	<p>Դիմել հիմնադրամների, մասնակցել նախագծերի, համագործակցություն ՏԻՄ-ի հետ: Բարձր պատասխանատվություն դպրոցական գույքի նկատմամբ:</p>

							ների, բարե րարների հետ: Ֆորս մաժորային իրավիճակ	
--	--	--	--	--	--	--	--	--

7. Զարգացման ծրագրի արդյունքների գնահատման մեխանիզմը

Զարգացման ծրագրի կատարման գնահատումը կիրականացվի արդյունքների ցուցանիշների կատարման հիման վրա: Ծրագրի նպատակների կատարման մակարդակը և իրականացված գործողությունների անմիջական արդյունքները գնահատելիս հաշվի կառնվի ներդրոցական վերահսկողության, դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության արդյունքում տարբեր ցուցանիշների վերլուծությունը, իրավիճակի ախտորոշումը և բարելավումներին ուղղված գործողությունների արդյունավետության գնահատումը, ինչպես նաև ուսուցման գործընթացի մասնակիցների շրջանում հարցումների իրականացումը, մշտադիտարկման տարբեր ձևերի կիրառումը: Ըստ դպրոցի օրինակելի կանոնադրության և զարգացման ծրագրի՝ վերահսկողությունը՝ որպես գործառույթ, ամրագրված է խորհրդի, մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների, Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տնօրենի, վարչատնտեսական համակարգողի և տեղակալների իրավասություններում:

Ծրագրի համար արդյունքների միջանկյալ գնահատման հնարավորություններից են՝

- յուրաքանչյուր ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվությունները.
 - ներքին գնահատման հաշվետվությունների ներկայացումը շահառուներին.
 - դպրոցի տարբեր օղակներում քննարկումների կազմակերպումը.
 - ներդրոցական վերահսկողության իրականացումը դասալսումների արդյունքների վերլուծությունը և բարելավման ռազմավարության ուղղությունների արդյունքների գնահատումը.
 - կրթության գործընթացի մասնակիցների շրջանում դպրոցի գործունեության վերաբերյալ հարցումների իրականացում և արդյունքների քննարկումներ և այլն.
 - դպրոցի գործունեության մասին տեղեկատվության ապահովում՝ դպրոցի կայքէջում և իրազեկում ծնողներին՝ ժողովների և դպրոցական միջոցառումների ժամանակ:
- Ցուցանիշների և չափանիշների հաշվարկման ժամանակ նպատակահարմար ենք համարում կիրառել հետևյալ մեթոդները՝

- վիճակագրական տվյալների վերլուծություն.

.-փաստաթղթային վերլուծություն.

- դիտարկում և փաստագրում.

- հարցումների իրականացում և արդյունքների վերլուծություն:

Յուրաքանչյուր տարվա ավարտից հետո երեսուն աշխատանքային օրվա ընթացքում հաստատությունը կուլեգիալ կառավարման մարմնին խորհրդին կներկայացվի հաշվետվություն ծրագրի տվյալ տարվա համար սահմանված գործողությունների և արդյունքների կատարողականի վերաբերյալ:

Հաշվետվությունը, ըստ բովանդակությանը ներկայացվող պահանջների, ներառում է՝

- 1) նպատակներին ուղղված գործողությունների արդյունքները և դրանց հիմքերը.
- 2) չկատարված կամ թերի կատարված գործողությունների հիմնավոր պատճառները.
- 3) զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկությունները.
- 4) հաղորդակցության և համայնքի հետ հարաբերությունների կազմակերպման մեխանիզմները
- 5) ըստ անհրաժեշտության այլ ցուցանիշներ:

Հաստատության զարգացման ծրագրի կատարողականի ցուցանիշներն են՝

- 1) սովորողների ակադեմիական առաջընթացն ու կրթության որակի բարելավումը.
- 2) աշխատակազմի կառավարման և մասնագիտական զարգացման համակարգի արդյունավետությունը.
- 3) հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների ներգրավվածությունը և մասնակցայնությունը.
- 4) դասավանդման համար անհրաժեշտ ռեսուրսների հասանելիությունը և կիրառությունը.
- 5) մանկավարժական ինքնավարության և ակադեմիական ազատության ապահովումը.
- 5) բոլոր շահառուների համար դրական և ապահով մթնոլորտի ապահովումը:

Հաշվետվությունը կներառի յուրաքանչյուր ցուցանիշի կատարումը փաստող անհրաժեշտ տվյալներ, հիմնավորող փաստաթղթեր, վերլուծություններ, որոնք կցվում են հաշվետվության ձևաչափին:(ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թ. սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրաման, փոփոխություններ ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թ. փետրվարի 8-ի N 09-Ն հրամանի)

Դպրոց-ԲՈՒՀ համագործակցություն



Համայնք-դպրոց համագործակցություն



Աշակերտական խորհուրդ



Միջոցառումներ, բաց դասեր



Մեր հաջողությունները

